Ազգ
Azg
armenian daily
28 ՀՈԿՏԵՄԲԵՐ 1995, ՇԱԲԱԹ # 208 (962)

Ելցինի հիվանդության պատճառով բոսնիական հարցին նվիրված հանդիպումը տեղի չի ունենա

Բորիս Ելցինի հիվանդության պատճառով հրավիրված բժիշկների խորհրդակցությունը անհանգստացնող համարեց նրա առողջական վիճակը եւ նպատակահարմար գտավ հետագա բուժումը շարունակել իրենց անմիջական հսկողության ներքո: Նախնական տվյալների համաձայն, բուժումը կտեւի մինչեւ նոյեմբերի վերջը: Սերբիայի, Բոսնիայի եւ Խորվաթիայի նախագահների հոկտեմբերի 31-ին Մոսկվայում կայանալիք հանդիպումը հետաձգվում է եւ տեղի կունենա ավելի ուշ:

Ամերիկյան պատվիրակությունը կժամանի Երեւան

Նոյեմբերի 2-ին ԱՄՆ նախագահի ավագ խորհրդական Ջեյմս Քոլինզի գլխավորությամբ Հայաստան կժամանի ԱՄՆ պետական պատվիրակությունը, որի կազմում են ԱՄՆ Պետդեպարտամենտի, պաշտպանության նախարարության ու Սպիտակ տան 30 ներկայացուցիչներ: Ինչպես տեղեկացրեց Հայաստանում ԱՄՆ դեսպան Պիտեր Թոմսենը, պատվիրակությունը հանդիպումներ կունենա ՀՀ կառավարությունում: Կքննարկվեն հայ-ամերիկյան հարաբերություններին, Հայաստանին տրվող տնտեսական օժանդակության, երկու երկրների համագործակցության, ինչպես նաեւ ղարաբաղյան հակամարտության վերաբերող հարցեր: Պատվիրակությունը այցելելու է նաեւ Վրաստան, Ադրբեջան, Բելառուս եւ Մոլդովա: *ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ*

ՎԱՇԻՆԳՏՈՆ

Լեւոն Տեր-Պետրոսյանը հանդիպում ունեցավ ԱՄՆ-ի փոխնախագահի հետ

ԱՄՆ-ում Հայաստանի դեսպանատան նոր շենքի բացման արարողության կապակցությամբ Վաշինգտոնում գտնվող ՀՀ նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանը հոկտեմբերի 26-ին հանդիպում է ունեցել ԱՄՆ-ի փոխնախագահ Ալբերտ Գորի հետ: ՀՀ նախագահի մամուլի ծառայությունից տեղեկացրին, որ տեղի ունեցած զրույցի ընթացքում քննարկվել են հայ-ամերիկյան հարաբերություններին վերաբերող հարցեր: Լեւոն Տեր-Պետրոսյանը շնորհակալություն է հայտնել ԱՄՆ-ի կառավարությանը Հայաստանում ընթացող բարեփոխումներին օժանդակելու, ԱՄՆ-ի կողմից Հայաստանին ցուցաբերվող հումանիտար օգնության համար: Քննարկվել են նաեւ ղարաբաղյան հակամարտության խաղաղ կարգավորման գործընթացին առնչվող հարցեր:

Հոկտեմբերի 26-ին Լեւոն Տեր-Պետրոսյանը Վաշինգտոնում հանդիպում է ունեցել ԱՄՆ-ի Հայկական համագումարի հոգաբարձուների խորհրդի անդամների հետ: Նախագահը բարձր է գնահատել ԱՄՆ-ի Հայկական համագումարի հայրենանպաստ գործունեությունը, կազմակերպության ավանդը հայ-ամերիկյան հարաբերությունների զարգացման գործում:

Հոկտեմբերի 26-ին ՀՀ նախագահը Վաշինգտոնում ընդունել է Ռամկավար ազատական կուսակցության կենտրոնական վարչության ատենապետ, այդ առիթով Բեյրութից ժամանած Հակոբ Գասարճյանին եւ առանձնազրույց է ունեցել:

Լեւոն Տեր-Պետրոսյանը հոկտեմբերի 27-ի երեկոյան վերադարձավ Երեւան:

ԱՐՄԵՆՊՐԵՍ

Ադրբեջանին է հանձնվել երեք ռազմագերի

Հայաստանի ՆԳՆ մամուլի ծառայության հաղորդման համաձայն, հոկտեմբերի 24-25-ը Երեւանում տեղի ունեցած ԱՊՀ երկրների ՆԳ նախարարների խորհրդակցության ժամանակ Ադրբեջանի ներկայացուցիչներին հանձնվել են Հայաստանում գտնվող երեք ռազմագերիներ: Նրանցից երկուսը՝ Ադրբեջանի Ֆիզուլու շրջանի բնակիչ, 1976թ. ծնված Ալի Իսա օղլի Ասլանովն ու Ջաբրայիլի շրջանի բնակիչ, 1976թ. ծնված Ռեշադ Իվազ օղլի Ալիեւը, գերի են վերցվել 1995թ. օգոստոսին: Ազատ արձակված երրորդ ռազմագերին՝ Ռաֆիկ Թոֆիկ օղլի Աբասովը, ծնվել է Բաքվում 1965թ.-ին, գերվել է 1994թ. հունիսին: *ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ*

Սահմանում անդորրը պահպանվել է

ՀՀ պաշտպանության նախարարության մամուլի եւ լրատվության վարչությունից հայտնեցին, որ հոկտեմբերի լույս 27-ի գիշերը եւ առավոտյան հայ-ադրբեջանական սահմանում պահպանվել է հանգիստ իրավիճակը, միջադեպեր չեն գրանցվել: *ԱՐՄԵՆՊՐԵՍ*

Ողբերգական միջադեպ Իջեւանի շրջանի Կիրանց գյուղում

Հենց առաջին օրերից հայ-ադրբեջանական զինված հակամարտության կիզակետում հերոսաբար պայքարող Իջեւանի շրջանի Կիրանց գյուղում հոկտեմբերի 26-ին տեղի է ունեցել ողբերգություն: Հարեւանների վեճի հետեւանքով հրազենի զոհ են դարձել գյուղի բնակիչներից մեկը՝ Պավլիկ (Փաշիկ) Բաքինյանը եւ ազգային բանակի տեղի ստորաբաժանման հրամանատար Սուրիկ Դավլյանը: Բաքինյանի երկու զավակները վիրավոր են: Դեպքի կապակցությամբ կատարվում է հետաքննություն:

«ԴՐՈ» ԴԱՏ

Կուսակցական գործունեության մասին՝ դուրս գալուց հետո

«Իմ կողմից տրված ցուցմունքները ու խոստովանությունները հետեւանք են ֆիզիկական ու հոգեբանական ճնշումների», հոկտեմբերի 27-ին ընթացող «Դրո» գործի դատավարության հերթական նիստում հայտնեց ամբաստանյալ Արա Հարությունյանը: Երեկվա ցուցմունքներում ամենաուշագրավը թերեւս ճամպրուկների [illegible] պատմությունն էր, որին մասնակցել էր նաեւ ամբաստանյալը: Առաջին ճամպրուկը Նորքի 1-ին զանգվածից իր մեքենա[illegible]յով տեղափոխել են ամբաստան[illegible], Հովիկ Մկրտչյանի հետ միասին: Ճամպրուկը բերել է Հովիկը, հաջորդ օրը առավոտյան ինքը նրան տարել է օդանավակայան: Հետո Հովիկը Մոսկվայից զանգահարել է («ո՞ւմ՝ չի հիշում») եւ հայտնել, որ ճամպրուկը տեղ չի հասել եւ խնդրել է փնտրել օդանավակայանում: «Զվարթնոցում» նրան ու Հովիկին հայտնել են, որ ճամպրուկների անհետանալու վերաբերյալ Մոսկվայի օդանավակայանից ահազանգ չեն ստացել: Երկրորդ օրը կրկին զանգել են օդանավակայան փնտրելու նպատակով, սակայն ապարդյուն: Մեկ-երկու օր հետո Հովիկը զանգել է ու հայտնել, որ ճամպրուկը ստացել է: Հաջորդ զանգով Հովիկը պահանջել է նաեւ մյուս ճամպրուկը, որը ամբաստանյալներից Արմեն Զաքարյանի հետ միասին Նորքի 1-ին զանգվածի բնակարանից տեղափոխել են Նոր-Դոնի փողոցի բնակարանը: Դատավորի հարցին, թե Արմեն Արծրունու հետ ծանոթությունը որտեղից է սկսվել, պատասխանեց՝ Լիբանանից: Ինքը եղել է Բուրջ Համուդի ե[illegible]անում, [illegible]րիտասարդաց միության [illegible], իսկ Արմենը՝ նույն միության անդամ էր իրենց շրջանում: Երկուսն էլ ընդգրկված են եղել քաղաքական հանձնախմբում: ՀՅԴ անդամ է 82-ից, ընդունվել է Բեյրութում, այնտեղ աշխատում էր հոր արհեստանոցում: Դատավորի հարցումին՝ հանձնախմբում ինքն էր Արմենին ենթարկված, թե՞... ամբաստանյալը գերադասեց չխոսել կուսակցական խոհանոցի մասին, փոխարենը դատավորին խոստացավ պատմել դուրս գալուց հետո: Ս. Գ.

ՄԵԾԱՄՈՐ

Գործարկվեց ատոմակայանի երկրորդ էներգաբլոկի ռեակտորը

Ավելի քան 6,5 տարվա ընդմիջումից հետո, հոկտեմբերի 27-ի գիշերը, ժամը 1.33-ին գործարկվեց ՀԱԷԿ-ի երկրորդ էներգաբլոկի ռեակտորը: Այս մասին ասված է ՀՀ կառավարության մամուլի ծառայության տարածած հաղորդագրության մեջ: Այսպիսով դրվեց 2-րդ բլոկի էներգետիկ թողարկման սկիզբը: Ըստ վերագործարկման ժամանակացույցի, պահանջվում է շուրջ 2 շաբաթ, որպեսզի սկսվի էլեկտրաէներգիայի արտադրությունը: Աստիճանաբար, մինչեւ 20 օրվա ընթացքում, կայանը կաշխատի նախագծային կարողությամբ, արտադրելով օրական 9 մլն կվտ/ժ էլեկտրաէներգիա:



Ատոմային էներգետիկայի պատմության մեջ իր նախադեպը չունեցող այս երեւույթը՝ կանգնեցված կայանի վերագործարկումը, ՀՀ իշխանությունների տարբեր մարմինների, կառավարության, էներգետիկների, շինարարների, ատոմակայանի կոլեկտիվի 2,5-ամյա ջանքերի արդյունքն է, որին իրենց նպաստ են բերել նաեւ ՌԴ կառավարությունը եւ ատոմային էներգիայի նախարարությունը, ՄԱԳԱՏԷ-ն եւ այլ կազմակերպություններ: ■

ՔՐԻՍՏՈՆԵՈՒԹՅՈՒՆ-1700

Հայաստանն ակնկալում է ՅՈՒՆԵՍԿՕ-ի աջակցությունը

Չորեքշաբթի օրը Փարիզում բացվեց ՅՈՒՆԵՍԿՕ-ի Գլխավոր համաժողովի 28-րդ նստաշրջանը, որին մասնակցում են 160-ից ավելի երկրների ներկայացուցիչներ: Նստաշրջանն անցնում է ՄԱԿ-ի հիմնադրման 50-ամյակի շրջանակներում: Հայաստանի պատվիրակությունը գլխավորում է ՀՀ արտաքին գործերի նախարար Վահան Փափազյանը: Պատվիրակության կազմում են նաեւ Երեւանի Մատենադարանի տնօրեն ակադեմիկոս Սեն Արեւշատյանը, Բյուրականի աստղադիտարանի տնօրեն Արտաշես Պետրոսյանը, ՅՈՒՆԵՍԿՕ-ի ազգային հանձնաժողովի պատասխանատու քարտուղար Վարդուհի Ասատրյանը եւ ԱԳՆ ՄԱԿ-ի եւ ԵԱՀԿ-ի բաժնի վարիչ Աշոտ Քոչարյանը: ԱԳՆ մամուլի եւ հասարակայնության հետ կապերի ծառայությունից հայտնեցին, որ Հայաստանը, ի թիվս այլ առաջարկների, ՅՈՒՆԵՍԿՕ-ին է ներկայացրել որոշման մի նախագիծ, որով ակնկալում է այդ հեղինակավոր կազմակերպության աջակցությունը Հայաստանում քրիստոնեության 1700-ամյակի տոնակատարության հետ կապված միջոցառումներում: *ԱՐՄԵՆՊՐԵՍ*

ՀԱՄԱՌՈՏ

Եվրամիության օգնությունը Անդրկովկասին

Եվրամիությունը որոշում է ընդունել կես տարվա ընթացքում 22,32 միլիոն էկյուի օգնություն ցույց տալ Հայաստանին, Ադրբեջանին եւ Վրաստանին: Հինգշաբթի օրը Բրյուսելում հայտարարելով այդ մասին, Եվրոպական հանձնաժողովի ներկայացուցիչը նշել է, որ Եվրամիությունը օգնության բաշխման խնդրում կգործի Միջազգային կարմիր խաչի եւ այլ ոչ կառավարական կազմակերպությունների հետ համատեղ: Ինչպես հոկտեմբերի 27-ին հաղորդել է ԻՏԱՌ-ՏԱՍՍ-ը, այս ծրագրի նպատակը՝ նեղված հանրապետությունների բնակչությանը ձմռանը դեղամիջոցներով, բժշկական եւ սանիտարական սարքավորումներով, մթերքներով ապահովելն է: Հայաստանը կստանա 7.23, Ադրբեջանը՝ 7.34, Վրաստանը՝ 7.53 միլիոն էկյու: Այս միջոցները առաջին հերթին նախատեսված են ռազմական գործողություններից տուժած շրջանների, փախստականների եւ բնակչության ամենաանապահով խավերի համար: *ԱՐՄԵՆՊՐԵՍ*

Գրաչովի այցն ԱՄՆ սկսվեց միջադեպով

ՌԴ պաշտպանության նախարար Պավել Գրաչովի այցն ԱՄՆ սկսվեց միջադեպով՝ նրա մեքենան ոչ ճիշտ կայանման համար ամերիկյան ոստիկանության կողմից [illegible] եւ [illegible] հոսատարակ եւ միայն ամերիկյան [illegible] 75 դոլլար տուգանք վճարելուց հետո ազատ արձակվեց: Ըստ ամերիկյան կողմի [illegible]ամձներից մեկի, ռուսական զինված վա[illegible]նիայում կարող են մասնակցել ուժերը [illegible]ն, ակնաստեղծման եւ [illegible]ցել աջակցությ[illegible]ագնման միջոցառումների վերակ[illegible] այս հարցումներին: Ավելի մանրամասն[illegible] մի[illegible]ցը կքննարկվի Գրաչովի եւ Փերրի[illegible]ջեւ տեղի ունեցող բանակցություններում: Հայտնի է դարձել, որ ամերիկյան կողմը ծրագրում է Բոսնիա ուղարկել 20 հազարից բաղկացած զորախումբ, իսկ ռուսական կողմը մեկ օդադեսանտային դիվիզիա: ■

ԵՐԵՎԱՆ

Նախկին վարչապետը հույս ունի, որ ՀՀ նախագահը չի ստորագրի ակցիզային հարկին առնչվող օրենքը

ԵՐԵՎԱՆ, 27 ՀՈԿՏԵՄԲԵՐ, ՍՆԱՐՔ: «Հուսով եմ, որ Հայաստանի նախագահը չի ստորագրի «Ակցիզային հարկին առնչվող օրենքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքը», այսօր Սնարքի թղթակցին հայտարարեց ՀՀ նախկին վարչապետ, ԱԺ պատգամավոր Խոսրով Հարությունյանը:

Նրա խոսքերով, սխալ է օրենքում փոփոխություն կատարելու բուն գաղափարը: «Ինձ համար անհասկանալի է, ասաց նա, թե ինչու կառավարությունը համաձայնեց ներմուծվող ավտոմեքենաների ակցիզները 25-ից իջեցնել 15-ի: Հայտնի է, որ հանրապետություն բերվում են ՎԱԶ մակնիշի կամ արտասահմանյան նոր-նոր ավտոմոբիլներ, որոնք ձեռք են բերում բնակչության ունեւոր խավերը: Իսկ պերճանքի առարկա չհանդիսացող բենզինի վրա սահմանվեց 25 տոկոսանոց ակցիզային հարկ»: Նախկին վարչապետի կարծիքով, դա կհանգեցնի գյուղմթերքների, փոխադրամիջոցների եւ բոլոր սպասարկումների թանկացմանը: Գների բարձրացումը կշարունակվի մինչեւ դեկտեմբերի 1-ը, երբ կառավարությունը փորձեր չձեռնարկի եւ գինն իջեցնելու նպատակով շուկա չհանի բենզինի լրացուցիչ քանակություն, ավելացրեց Հարությունյանը: ■

«Զվարթնոցը» կդառնա ամենաբարձր կարգի օդանավակայան

ՀՀ քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչության եւ Serco բրիտանական ֆիրմայի միջեւ հոկտեմբերի 27-ին Երեւանում ստորագրվեց փոխըմբռնման հուշագիր «Զվարթնոց» օդանավակայանը միջազգային բարձր ստանդարտներին համապատասխանեցնելու նպատակով աշխատանքների կազմակերպման եւ համապատասխան ծրագրերի իրականացման վերաբերյալ: Հուշագիրը ստորագրեցին ՀՀ կառավարության լիազոր ներկայացուցիչ Շահեն Պետրոսյանը, «Զվարթնոց» օդանավակայանի գլխավոր տնօրեն Վարուժան Մնացականյանը եւ Serco ֆիրմայի տնօրեն լորդ Ոս Օլիվերը:

Նախատեսվում է օդանավակայանի պոտենցիալ հզորությունների [illegible]ահայտման եւ ճշգրտման նպա[illegible] [illegible]ագրային իրականաց[illegible] [illegible]ան ուսումնասիրե[illegible] ների խորհրդատվ[illegible] կարություններ, որոնց արդյու[illegible] ստորագրվի օդանավակայանի [illegible] մասին ձեռնարկության ստեղծման վերաբերյալ պայմանագիր: Դրա նպատակն է «Զվարթնոցը» դարձնել ICAO-ի 7ա (ամենաբարձր) կատեգորիայի օդանավակայան: *ԱՐՄԵՆՊՐԵՍ*

ՏԵՂԱԿԱՆ

ԵՐԵՎԱՆ

«Դեմոկրատիայի զարգացման եւ մարդու իրավունքների կենտրոնը հայկական կենտրոն է»

ՄԱԿ-ի ներկայացուցչությունում կայացավ կենտրոնի բացման արարողությունը

Ինչպես հաղորդել էինք, նոյեմբերի 27-ին տեղի ունեցավ Դեմոկրատիայի զարգացման եւ մարդու իրավունքների կենտրոնի բացումը, որի հիմնադիրներն են Երեւանի պետական համալսարանը, Միացյալ ազգերի փախստականների գծով գերագույն հանձնակատարը եւ ՄԱԿ-ի զարգացման ծրագիրը: Կենտրոնը առաջինն է նախկին խորհրդային հանրապետությունների մեջ: Բացմանն էին հրավիրել ՀՀ կառավարության, ԱԺ նախագահության ներկայացուցիչներ, Հայաստանի Հանրապետությունում հավատարմագրված օտարերկրյա դեսպաններ: ՀՀ արտաքին գործերի փոխնախարար Վարդան Օսկանյանը կենտրոնի բացումը գնահատեց որպես եւս մի քայլ ժողովրդավարության ինստիտուտի ասպարեզում: «Ժողովրդավարական անցյալ մենք ունեցել ենք, սակայն Խորհրդային Միության օրոք ապրած տարիներն այսօր ավելի զգալի են, քան մեր հազարամյա փորձը: Ժողովրդավարությունը մի օրվա ընթացքում հնարավոր չէ հաստատել, պետք է հետեւողական աշխատանք տանել, որպեսզի Հայաստանում ստեղծվեն դրա բոլոր հիմունքները: ՀՀ սահմանադրությունը պետք եղած հիմքերը դրել է նման աշխատանք կատարելու»:

Կենտրոնն իր նպաստը կբերի Հայաստանի արտաքին քաղաքականության կարեւորագույն ուղղություններից մեկի եվրոպական կառույցներում ինտեգրացման հարցում: ԱԳՆ-ն իր մասնակցությունն է բերում կենտրոնի աշխատանքներին ստեղծելու համար Հայաստանում այնպիսի հասարակություն, որը համատեղելի կլինի դարերի ընթացքում Եվրոպայում ստեղծված սոցիալական եւ ընկերային համակարգերին:

ԵՊՀ ռեկտոր Ռադիկ Մարտիրոսյանի կարծիքով, մարդու իրավունք եւ ժողովրդավարություն հասկացությունները անհրաժեշտ են ոչ միայն այն մարդկանց, ովքեր դրանից պետք է օգտվեն, այլեւ անպայմանորեն նրանց, ովքեր սատարում եւ սովորեցնում են: «Մինչեւ վերջին տարիները համալսարանի ծրագրերը այդ կապակցությամբ շատ աղքատ էին: ԵՊՀ-ին ընձեռված հիմնադիր լինելու հնարավորությունը թույլ է տալիս իրականացնել իրավաբանական կադրերի նորովի պատրաստումը»:

Եվրոպայի անվտանգության եւ համագործակցության կազմակերպությունը, Եվրոպայի խորհուրդը եւ Եվրոպական միությունը, ինչպես նաեւ բազմաթիվ կառավարություններ բազմիցս նշել են մարդու իրավունքների եւ ժողովրդավարության աջակցության կարիքը: ՄԱԿ-ի հռչակագրի 14-րդ կետով, ըստ որի Եվրոպական անվտանգության եւ համագործակցության կոնֆերանսը վերածվեց կազմակերպության, նշվում է, որ հարգանքը մարդու հիմնական իրավունքների, ժողովրդավարության եւ օրենքի նկատմամբ այն հիմնական տարրն է, որ պիտի ապահովի անվտանգությունն ու համագործակցությունը եվրոպական տարածաշրջանում: Կենտրոնը կրթական հաստատություն է, որը ինֆորմացիայի տարածման եւ կրթական միջոցառումների շնորհիվ նպատակ ունի աջակցել մարդու իրավունքների հաստատմանը Հայաստանում: Այն պետք է ֆինանսավորվի Միացյալ ազգերի փախստականների գերագույն հանձնակատարի, ՄԱԿ-ի զարգացման ծրագրի, ԵԱՀԿ-ի, ինչպես նաեւ այլ աղբյուրների կողմից: Կենտրոնը սերտորեն կհամագործակցի միջազգային կազմակերպությունների, ազգային հաստատությունների, մարդու իրավունքների բնագավառում աշխատող կազմակերպությունների հետ:

ԱԳՆ փոխնախարարը, ԵՊՀ ռեկտորը եւ ՄԱԿ-ի զարգացման ծրագրի ներկայացուցիչը ստորագրեցին կենտրոնի ստեղծման մասին փաստաթուղթ:

Կենտրոնի առաջին գլխավոր գերագույն քարտուղար երկամյա ժամկետով նշանակվեց Վլադիմիր Մովսիսյանը, «մարդ, որը նկատելի կարիերա է ստեղծել Հայաստանում, որը հարգված է իր ժողովրդի, փաստաբանների կողմից»: Նա առաջին աշխատանքային պայմանագիրը ստորագրեց Միջազգային կարմիր խաչի հայաստանյան ներկայացուցիչ Էրվին Բոռլի հետ:

ԱՆՈՒՇ ԳԱԼՍՏՅԱՆ

ԱՆՑՈՒԴԱՐՁ

Հոլանդիան Հայաստանի համար կմիջնորդի Եվրահամայնքում

Հոլանդիայի կառավարությունը որոշում է ընդունել Հայաստանում 500 հազար գուլդեն ընդհանուր արժողությամբ մանկական սննդի նվիրատվություն կատարելու վերաբերյալ: Այս մասին երեկ տեղի ունեցած մամուլի ասուլիսում հայտնեց Հոլանդիայի ֆինանսների նախարար Գերրիթ Զալմը: Նրա գլխավորած պատվիրակությունը նոյեմբերի 26-ին Հայաստան է ժամանել հանրապետության տնտեսության վիճակն ուսումնասիրելու, ֆինանսական աջակցություն ցուցաբերելու եւ Հոլանդիայի ու Հայաստանի միջեւ կրկնակի հարկից խուսափելու, փոխադարձ ներդրումների, առեւտրատնտեսական փոխհարաբերությունների զարգացման վերաբերյալ համաձայնագիր կնքելու նպատակով: Կառավարական պատվիրակության հետ Հայաստան են ժամանել նաեւ հոլանդացի գործարարներ: Հիշեցնենք, որ Հոլանդիան Հայաստանի հետ Համաշխարհային բանկում գտնվում է մեկ խմբակցության մեջ, որը եւ գլխավորում է:

Հոլանդիայի ֆինանսների նախարարը հայտարարեց, որ իր երկրի կառավարությունը հետագայում եւս մտադիր է օգնություն ցուցաբերել Հայաստանին, մասնավորապես հանրապետության վճարային հաշվեկշռի ճեղքվածքը փակելու նպատակով: Հոլանդիան կարող է նաեւ Եվրահամայնքում միջնորդել հացահատիկ գնելու նպատակով 1992 թ. Հայաստանի պարտք վերցրած գումարը որպես մարդասիրական օգնություն վերաձեւակերպելու համար: Գերրիթ Զալմի խոսքերով, իրենց այցելությունը հիմք կծառայի Հոլանդիայի կողմից Հայաստանում ներդրումներ կատարելու համար: ՀՀ ֆինանսների նախարար Լեւոն Բարխուդարյանը հայտարարեց, որ այդ այցը նոր փուլ կդառնա Հոլանդիայի եւ Հայաստանի երկկողմանի հարաբերությունների զարգացման համար: Վերջին տարիներին երկու երկրները համագործակցել են առեւտրի, գյուղատնտեսության, քիմիական արդյունաբերության բնագավառներում: Այս տարի Հոլանդիան Միջազգային արժութային հիմնադրամի կողմից Հայաստանին տրամադրած վարկին լրացուցիչ ավելացրել է 5 մլն գուլդեն:

ԳԱԳԻԿ ՄԱՐՏՈՅԱՆ

Հանցագործությունների թվի նվազման միտում Գյումրիում

Գյումրիի քաղաքային բաժնի պետ, գնդապետ Վազգեն Հարությունյանի գնահատմամբ, վերջին տարիներին այստեղ, չնայած օպերատիվ իրավիճակի լարվածությանը, հանցագործությունների թիվը նվազման միտում ունի: Միաժամանակ ավելացել է դրանց բացահայտման տոկոսը, որը, ըստ Վ. Հարությունյանի, բարձր է միջին հանրապետական ցուցանիշից: Այս տարվա 9 ամսվա ընթացքում քաղաքում արձանագրվել է տարբեր կարգի հանցագործությունների 393 դեպք՝ նախորդ տարվա 472-ի փոխարեն: Մեկ քառորդով պակասել է ծանր հանցագործությունների թիվը: Համեմատվող ժամանակահատվածում հանցագործությունների բացահայտումը 69-ից հասել է 81 տոկոսի: Այդ թվում, բաժնի պետի վկայությամբ, բացահայտվել են սպանության բոլոր դեպքերը: Նույն ժամանակամիջոցում քաղաքում կրկնակի ավելացել է ավտովթարների եւ վրաերթերի թիվը, որի պատճառներից մեկն է անբարեկարգ ու չլուսավորված փողոցներն են: Ավելացել են թմրամոլները, հայտնաբերվածների թիվը 13-ով ավելի է նախորդ տարվանից: Վնասազերծվել են թմրամոլության որջեր, քրեական պատասխանատվության է ենթարկվել 38 մարդ: Հանցագործների մեջ հայտնվել են կանայք:

ԳԵՂԱՄ ՄԿՐՏՉՅԱՆ

Կտտանքների դեմ պայքարը հրատապ խնդիր՝ 21-րդ դարի շեմին

Նոյեմբերի 24-26-ը Հայաստանի «Պատանդների պաշտպանության ֆոնդի» (ՊՊՖ) եւ «Կտտանքների զոհերի վերականգնման միջազգային խորհրդի» (IRCT-Դանիա) նախաձեռնությամբ անցկացված երեւանյան սեմինարը՝ նվիրված ՄԱԿ-ի հիմնադրման 50-ամյա հոբելյանին, կտտանքների եւ կազմակերպված բռնության զոհերի բժշկահոգեբանական, սոցիալական վերականգնման հարցերի ծավալուն, լայնամասշտաբ քննարկում էր: Սեմինարի կազմակերպման գործում մեծ էր նաեւ ռուսաստանյան «Կարեկցանք» ընկերության եւ ՀՀ սոցիալական ապահովության նախարարության ներդրումը:

Սեմինարին մասնակցեցին եվրոպական երկրների (Դանիա, Շվեյցարիա, Գերմանիա), ԱՊՀ երկրների ամենատարբեր մարդասիրական կազմակերպությունների ներկայացուցիչներ, այդ թվում՝ IRCT-ից, Միջազգային կարմիր խաչի կոմիտեից (ICRC), Միավորված մեթոդիստների օգնության կոմիտեից (UMCOR), «Բժիշկներ առանց սահմանի» կազմակերպությունից (MSF), ՄԱԿ-ի՝ փախստականների կոմիտեից (UWHCR), ռուսաստանյան «Կարեկցանք» կենտրոնից, Աբխազիայի հումանիտար ծրագրերի կենտրոնից, Վրաստանից, Օսիայից, Ղարաբաղից, Հայաստանի ՊՊՖ-ից, «Արեւ» բժշկական կենտրոնից: Հրավիրված էին նաեւ Ադրբեջանի ներկայացուցիչներ, սակայն վերջիններս ինչ-ինչ պատճառներով չէին ժամանել:

Սեմինարում քննարկվեցին միջազգային հումանիտար իրավունքի, բռնությունների զոհերի սոցիալ-իրավաբանական, բժշկահոգեբանական օգնության կազմակերպման ուղիների, ժամանակակից միջոցների, կտտանքների զոհերի հոգե[illegible] [illegible] պատասխանատվության խնդիրներ: Ցուցադրվեցին աշխարհի տարբեր երկրներում (Թուրքիա, Իրան, Իրաք, Լատինական Ամերիկայի, Աֆրիկայի երկրներ) կիրառվող խոշտանգումների մեթոդները ցուցադրող տեսաժապավեններ (դրանց զոհերը հիմնականում պատերազմների գերիներն ու քաղբանտարկյալներն են):

Սա խնդրո առարկա հարցերին նվիրված երրորդ սեմինարն էր ԱՊՀ տարածքում (նախորդ երկուսը տեղի են ունեցել Մոսկվայում եւ Կիեւում): Մեր տարածաշրջանում, ուր արդեն մի քանի տարի մոլեգնում են քաղաքացիական եւ ազգամիջյան հակամարտությունները, նման սեմինարի անցկացումը, բացի խորհրդանշական լինելուց, քաղաքակիրթ երկխոսության եւ ողջամտության հաղթանակի սկիզբը դառնալու հույս է ներշնչում (համենայն դեպս, այս միտքը հաճախ հնչեց սեմինարի ընթացքում):

Սեմինարից հետո կայացած մամուլի ասուլիսում սեմինարի մասնակիցները պատասխանեցին լրագրողների բազմաթիվ հարցերին: Նշվեց, որ այն կարեւոր քայլ էր մեր «անհանգիստ» տարածաշրջանի «թեժ կետերի» մարդասիրական կազմակերպությունների միջեւ տեղեկատվության, զինված հակամարտությունների ընթացքում տեղ գտած բռնությունների հրեշավոր փաստերին առնչվող դիտարկումների, դրանց ծանրագույն հետեւանքների դեմ պայքարի փորձի փոխանակման գործում, մի յուրատեսակ հաշվետվություն, որ կլրացնի արեւմտյան երկրների փորձը:

Մնում է ափսոսալ, որ 21-րդ դարի նախաշեմին դեռեւս հրատապ է մարդկային բարբարոսության դրսեւորումների դեմ պայքարի նորագույն մեթոդների մշակումը...

ԼԻԼԻԹ ԴԱՎԹՅԱՆ

ՌԱՄԿԱՎԱՐ ԱԶԱՏԱԿԱՆ ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակության 6 տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
«Ազգ» թերթի հիմնադիր խորհուրդ
Երեւան 375010, Հանրապետության 47
ֆաքս 562941, AT&T (3742) 151065
e-mail INTERNET: azg2@arminco.com
Գլխավոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ / հեռ. 521635
Խմբագրի տեղակալ
ՍԱՄՎԵԼ ԴԻԼԱՆԵԱՆ / հեռ. 52922[illegible]
[illegible]
ՍԱՐԳԻՍ ՍԱՐԳՍԵԱՆ / 562863
A STYLE համակարգչային ծառայություն / 581841
Ոճը եւ տառաձեւերը ԴԱՆԻԵԼ ԴԱԼԼԱՔԵԱՆԻ
Apple Macintosh
համակարգչային շարվածք
«Ազգ» թերթի
Յղումը «Ազգին» պարտադիր է
LIBERAL DEMOCRATIC NEWSPAPER
Editor
H. AVEDIKIAN / phone: 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 375010

ՀԱՄԱՌՈՏ

Քրիստոնեություն 1700. Կենտրոնական բանկը հուշադրամների պատրաստման մրցույթ է հայտարարում

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկը հայտարարում է Հայաստանում քրիստոնեության ընդունման 1700-ամյակին նվիրված հուշադրամների շարքի (5-7 անվանում) պատրաստման եւ իրացման պայմանների մրցույթ: Հուշադրամները պետք է պատրաստվեն 1996-2001թթ. ընթացքում, «պրուֆ» որակի բարձր հարգի ոսկուց եւ արծաթից, ինչպես նաեւ շրջանառության համար՝ ոչ թանկարժեք մետաղներից (երկմետաղ կամ պղինձ-նիկել համաձուլվածքից): Մրցութային առաջարկությունում անհրաժեշտ է նշել մանրամասնությունները՝ հուշադրամի յուրահատկությունը, թողարկման ծավալը, իրացման, փաթեթավորման եւ առաքման պայմանները: Առաջարկներն ընդունվում են մինչեւ 1995թ. դեկտեմբերի 15-ը, հետեւյալ հասցեով՝ Երեւան, Նալբանդյան 6: Հեռախոս՝ 58-35-33, ֆաքս՝ 56-04-41:

Օրինակելի կանգառների նախագիծ եւ երիտասարդական հանգստի տուն

Ժամանակավոր օբյեկտների թույլտվության մասին հարցի քննարկման ժամանակ Երքաղգործկոմի ոչ պետական առեւտրի կազմակերպման ձեռնարկության տնօրեն Ծրունցիկ Հայրյանը նշեց, որ այսուհետ հայտերի ընդունումը դադարեցվում է, միաժամանակ ցուցադրվեց օրինակելի կանգառների նախագիծ, որ, լրատվական ծառայության ասելով, առաջիկայում կօգտագործվի մայրաքաղաքի կանգառներում: Երքաղխորհրդի գործկոմի երեկվա նիստում քաղաքի ճարտարապետ Ասլան Մխիթարյանի ներկայացրած ծրագրի համաձայն, Նալբանդյան-Իսահակյան փողոցների հատվածում գտնվող փոքրիկ այգին վերակառուցվելու է հանգստի գոտու: Այստեղ կլինեն փոքրիկ շատրվաններ, ջրավազաններ, դեկորատիվ բույսերի անկյուններ, բացօթյա սրճարաններ: Առաջարկվում է այգու հարեւանությամբ կառուցել երիտասարդական հանգստի տուն, որը ծածկելու է Գետառի բաց հատվածի մի մասը (թենիսի խաղադաշտից Շախմատի տուն):

ու. Ա

100-160 լիտր նավթ՝ անապահով ընտանիքներին

Նոյեմբերի 27-ին Երեւանի բոլոր շրջանների ԲՇՏ-ներին եւ քաղաքային կոմիտեներին արդեն տրվել են «Ձմեռ 95-96» ծրագրով նախատեսված նավթի բաշխման ցուցակները, որոնք կազմվել են «Փարոս 2» ծրագրով կատարված հաշվառման հիման վրա: Նավթի բաշխումը, ամենայն հավանականությամբ, կսկսվի դեկտեմբերի առաջին տասնօրյակում: ՀՀ սոցիալական ապահովության, զբաղվածության, բնակչության տեղաշարժի եւ փախստականների հարցերի նախարարության սոցիալական ծառայությունների եւ մարդասիրական օգնության վարչության պետի տեղակալ Ասողիկ Մինասյանը տեղեկացրեց, որ նավթը կբաշխվի միայն Երեւանի, Աբովյանի, Բյուրեղավանի, աղետի գոտու քաղաքների եւ շրջկենտրոնների սոցիալապես անապահով ընտանիքներին: Յուրաքանչյուր ընտանիքի կտրվի 100լ նավթ: Միայն աղետի գոտու տնակներ[illegible] բնակվողներին կտրվի 160[illegible] [illegible] շենքերում բն[illegible]: Ջեռուցման [illegible] սոցիալապես [illegible] ընտանիքների համար նախատեսվում է ջեռուցման վարձի փոխհատուցում 10000 դրամի չափով:

ՆՏ

ԱԶԳ

իրադարձություն

Վաշինգտոնում Հայաստանի դեսպանատան բացմանը մասնակցեցին մոտավորապես 200 հրավիրյալներ: Նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանի, տիկին Լյուդմիլա Տեր-Պետրոսյանի, արտգործնախարար Վահան Փափազյանի, Հայ եկեղեցու Միացյալ Նահանգների Արեւելյան թեմի առաջնորդ Խաժակ արք. Պարսամյանի, Արեւմտյան թեմի առաջնորդ Վաչե արք. Աշճյանի, դիվանագիտական ներկայացուցիչների, ամերիկահայ համայնքի հայտնի դեմքերի առաջ բացման խոսքով հանդես եկավ Մ. Նահանգներում ՀՀ դեսպան Ռուբեն Շուգարյանը: Նա էլ վերցրեց քողը ցուցատախտակի վրայից, որ գրված էր. «Այս շենքը նվիրում են տեր եւ տիկին Հրայր Հովնանյանները իրենց ծնողքի եւ գերդաստանի հիշատակին»:

անդամներ, գլխավորությամբ սենատի խոսնակ եւ առաջիկա նախագահական ընտրությունների թեկնածու Ռոբերտ Դոուլի: Բոլոր ճառախոսներն էլ իրենց համակրանքը հայտնեցին Հայաստանի ու հայ ժողովրդի նկատմամբ եւ խոստացան նպաստել նորանկախ հանրապետության զարգացմանը: Նրանց խոսքում հիացմունք կար Հայաստանի նախագահի նկատմամբ, միաժամանակ խոստովանություն, որ առանց ամերիկահայ ընտրողների ճնշումի իրենք չպիտի կարողանային տեղեկանալ եւ նպաստել Հայաստանին ու Ղարաբաղին: Սենատոր Դոուլը հայտարարեց, որ Հայաստանին հատկացվելիք 85 միլիոնի օգնության նախագիծն արդեն վավերացված է:

Վերջում ելույթ ունեցավ մեծարյալը՝ նախագահ Լ. Տեր-Պետրոսյանը, որ մասնավորապես ասաց. «Այս սիստեմ, ոչ մի գերտերություն, լինի դա Մ. Նահանգները, լինի դա Ռուսաստանը, չի կարող ապահովել մեր ազգային անվտանգությունը: Մենք գտնում ենք, որ Հայաստանի անվտանգության բանալին մեր հարեւանների հետ մեր բարեկամությունն է: Հայաստանը չի ուզում ունենալ ոչ մի թշնամի. Հայաստանը ոչ մի երկրի թշնամի չի համարում, թշնամի չի դիտում: Նույնիսկ Ադրբեջանին: Ադրբեջանը երկիր է, որի հետ ունենք լուրջ քաղաքական խնդիր: Եւ այդ խնդիրը մենք պետք է լուծենք: Այդ խնդիրը պետք է լուծենք ոչ թե թշնամության խորացմամբ, այլ խաղաղ բանակցությունների սեղանի շուրջ, որը պետք է ապահովվի Ղարաբաղի արժանապատիվ եւ անվտանգ գոյությունը: Այսօր Հայաստանը թեեւ տնտեսապես, կարելի է ասել, ոտքի է կանգնում, եւ դա, ինչպես մեր տնտեսական ռեֆորմ-

ԱՄՆ

Լեւոն Տեր-Պետրոսյանը Վաշինգտոնում

ՀՀ դեսպանատան բացում եւ ընդունելություն ի պատիվ նախագահի

Մեր երեկվա համարում հակիրճ ներկայացրել էինք Հայաստանի Հանրապետության նախագահի վաշինգտոնյան այցի մասնավորապես ՀՀ դեսպանատան պաշտոնական բացման եւ այնուհետեւ Ամերիկայի հայկական համագումարի կազմակերպած ընդունելության մասին: Նախորդ օրը ուշ գիշերին մեր ստացած մանրամասն նոր տվյալներն ամփոփելով ներկայացնում ենք այսօր, օգտվելով նաեւ Փաստ գործակալության տրամադրած նյութերից:

Դեսպան Շուգարյանից հետո արտահայտվեց նախագահ Լ. Տեր-Պետրոսյանը, որ մասնավորապես ասաց.

«Լինելով Հայաստանի նախագահը, երբ այսքան ծանոթ դեմք եմ տեսնում ԱՄՆ-ում, զգում եմ, որ գտնվում եմ իմ բարեկամների միջավայրում: Եվ սրանք իսկապես դատարկ խոսքեր չեն: Սա նշանակում է, որ այստեղ հավաքված մարդիկ այն մարդիկ են, որոնք մեր անկախության առաջին օրվանից եղել են մեր կողքին եւ իրենց նպաստն են բերել մեր պետության կայացման գործին եւ վստահ եմ, այսուհետեւ էլ պատրաստ են իրենց ողջ կարողություններն ներդնել այդ արքայական նպատակին: Այսօր, ես առաջին անգամ ոտք դնելով Վաշինգտոնի մեր դեսպանատունը, ունեմ հետեւյալ զգացմունքները. նախ ես ուզում եմ իմ խորին շնորհակալությունները հայտնել իմ անունից եւ մեր կառավարության անունից մեր բարեկամ Հրայր եւ Աննա Հովնանյաններին, որոնք, կարծում եմ, գտել են ամենաճիշտ ձեւը հավերժացնելու իրենց ծնողների եւ գերդաստանի հիշատակը: Հրայր Հովնանյանը երբեք չի սխալվում իր սկսած գործի մեջ: Կապելով իր անունը Հայոց պետականությանը, նկատի ունենալով, որ Հայոց պետականությունը հավերժ է, այդպիսով հավերժացնում է իր պետականության հիշատակը: Նկատի ունենալով, որ դեսպանատունը հայրենիքի տարածքն է, պետք է գնահատել նրան, Հրայր Հովնանյանին նաեւ այն առումով, որ նա Հայաստանի տարածքը մեծացրեց 1400 քառակուսի մետրով: Եւ եթե [illegible] հանգամանքների բերումով տարին մեկ-երկու անգամ եք այցելում հայրենիք, արդեն այսօր հնարավորություն ունեք ամեն օր այցելելու հայրենիք»:

Նույն երեկոյան Ամերիկայի հայկական համագումարի կողմից ընդունելության ճաշկերույթ տրվեց ի պատիվ ՀՀ նախագահի: Շուրջ 750 հրավիրյալների մասնակցությամբ կայացած ընդունելության հանդիսավարն էր, ինչպես գրել էինք երեկ, ամերիկյան բազմափորձ դիվանագետ Էդվարդ Ջերեջյանը: Հայաստանի եւ Մ. Նահանգների օրհներգերի ունկնդրումից եւ Խաժակ սրբազանի աղոթքից հետո բարեգալստյան խոսք արտասանեց Ամերիկայի հայկական համագումարի վարչական խորհրդի փոխատենապետ տիկին Անի Թորպանը, որ գլխավորում էր ճաշկերույթը կազմակերպող [illegible] հանձնաժողովը:

Ամերիկյան [illegible] էին [illegible] Կոնգրեսի բազմաթիվ

դահլիճում այնքան սենատորներ ու կոնգրեսականներ են հավաքվել, որ կարծում եմ այստեղ կարելի էր մի նիստ գումարել եւ մեր բոլոր հարցերը լուծել: Այս դահլիճում հնչած ելույթներում այնքան հուսալի ներկայացվեց Հայաստանը, որ ինձ համարյա անելիք չմնաց: Եւ ես գտնում եմ, որ դա իսկապես ավելորդ է, որովհետեւ դահլիճում հավաքված են այն մարդիկ, որոնք մեր պետության, մեր անկախության առաջին օրվանից եղել են մեր կողքին, մասնակցել են այդ պետության կառուցմանը եւ մանրամասն տեղյակ են ամեն ինչի: Այդ պատճառով ես չեմ խոսելու Հայաստանի խնդիրների, տնտեսական վիճակի մասին: Ես պարզապես խոսելու եմ մեր սկզբունքների, մեր պետության իդեոլոգիայի մասին: Վերջին ընտրությունները, որոնք կայացան այս ամառ, դուք գնահատում եք որպես դեմոկրատիայի մի նոր քայլ մեր պետության մեջ: Դա այդպես է, եւ ես ձեզ հետ համաձայն եմ: Բայց տեղի է ունեցել մի ավելի կարեւոր բան, որը պետք է արձանագրել: Հուլիսի 5-ի ընտրություններով Հայաստանը վերջնականապես հրաժեշտ տվեց կոմունիզմին: Կոմունիստները մեր պառլամենտում ունեն ընդամենը յոթ տեղ: Ոչ մի նախկին խորհրդային հանրապետությունում, ընդհանրապես անգամ նախկին սոցիալիստական երկրներում այսպիսի երեւույթ չկա: Միակ հանրապետությունը Հայաստանն է, որտեղ կոմունիզմը վերջնականապես պարտված է: Հայաստանը հստակորեն ընտրել է իր ճանապարհը, իսկ այդ ճանապարհը դեմոկրատիան է եւ ազատ շուկայական հարաբերությունները: Սա է այսօր մեր պետության իդեոլոգիան: Եւ մենք այս ճանապարհը պետք է անցնենք մինչեւ վերջ: Ես, իհարկե, չեմ խոստանում, որ մեր իշխանության օրոք մենք կստեղծենք լիակատար դեմոկրատիա եւ կատարյալ շուկայական տնտեսություն: Սա ես չեմ խոստանում եւ չեմ կարող խոստանալ: Բայց ես խոստանում եմ, որ մեր իշխանությունը կանի ամեն ինչ, որպեսզի եւ դեմոկրատիան, եւ շուկայական տնտեսությունը դառնան անշրջելի: Ահա սա եմ ես համարում մեր խնդիրը, եւ այստեղ մենք չենք նահանջի, այստեղ մենք չենք տատանվի, կգնանք մինչեւ վերջ: Մեր իդեոլոգիայի հաջորդ կարեւոր սկզբունքը մեր ազգային անվտանգության, ազգային ապահովության հարցն է: Այստեղ բառը ինչ-որ փիլիսոփայություն [illegible] Մենք [illegible] այս հարցը լուծելու համար: [illegible]

ների հաջող ընթացքի շնորհիվ, այնպես նաեւ միջազգային հանրության, հիմնականում ԱՄՆ-ի օգնության շնորհիվ, բայց բոլոր դեպքերում մենք դեռեւս գտնվում ենք շատ ծանր տնտեսական վիճակում: Մենք ունենք էներգետիկայի շատ բարդ խնդիրներ: Հուսով ենք, որ այս ձմեռ ավելի թեթեւ կլինի, քան անցյալ ձմեռ, համենայնդեպս, մենք ավելի լավ ենք նախապատրաստված այս ձմռանը, քան անցյալ տարի: Շուտով մեր ատոմակայանը նույնպես էլեկտրաէներգիա կտա, ձմռանը դա հաստատ կլինի: Բայց ես կարծում եմ, էներգետիկայից ավելի մի կարեւոր խնդիր կա, որը պայմանավորում է Հայաստանի տնտեսության առաջացումը: Դա մեր հաղորդակցության ճանապարհներն են դեպի արտաքին աշխարհ: Սա ավելի կարեւոր խնդիր է տնտեսական տեսակետից, քան բոլոր մյուս խնդիրները: Մինչեւ չկարգավորվի Հայաստանի ազատ հաղորդակցումը արտաքին աշխարհի հետ մեր բոլոր հարեւանների Ադրբեջանի, Իրանի, Թուրքիայի եւ Վրաստանի, մենք նորմալ երկիր չենք դառնա: Հայաստանի տարածքով տնտեսական բախտը կախված է նրանից, թե որքան արագ Հայաստանում կիրականացվեն տնտեսական ռեֆորմները, եւ որքան արագ Հայաստանը կինտեգրվի միջազգային տնտեսական համակարգում: Այս խնդիրն է, որ մենք ձեզ հետ միասին պետք է լուծենք: Ես ուզում եմ իմ խորին շնորհակալությունը հայտնել ձեզ բոլորիդ Հայաստանի նկատմամբ ցուցաբերած ջանքերի համար: Ես իմ պարտքն եմ համարում իմ երախտագիտությունը եւ իմ շնորհակալությունը հայտնել ԱՄՆ-ի ժողովրդին եւ կառավարությանը: Մի օգնություն, որը վերջին չորս տարիների ընթացքում Հայաստանի համար եղել է վճռական, եղել է կենսական: Ես նկատի ունեմ եւ այն հսկայական հումանիտար օգնությունը, որ ցուցաբերվել է Հայաստանին, եւ Մ. Նահանգների խաղացած շատ կարեւոր դերը ՄԱՀ-ի եւ Համաշխարհային բանկի հսկայական աջակցության գործում, որը ցուցաբերվեց անցյալ տարվանից սկսած: Եւ երրորդը, ԱՄՆ-ի խաղացած շատ կարեւոր դերն է մեր ռեգիոնում կայունության եւ խաղաղության պահպանման գործում, ինչպես նաեւ Լեռնային Ղարաբաղի հարցի քաղաքական կարգավորման գործում: Դա այնքան ճնշում է մեր [illegible] համար, [illegible] Միացյալ Նահանգների [illegible] Հայաստանի [illegible] կայացման մասնակից»:

ՂԱՐԱԲԱՂ

Ծրագրերը ֆինանսավորում են պահանջում

«Այսօրվա դրությամբ ԼՂՀ կառավարության սոցիալական բաժնի տրամադրության տակ են 20-ից ավելի սոցիալական ծրագրեր, որոնք իրագործում են պահանջում, սակայն համապատասխան միջոցների պակասի պատճառով դրանց ֆինանսավորման հարցը առայժմ լուծված չէ»: Այդ մասին տեղեկացրեց ԼՂՀ կառավարության սոցիալական զարգացման բաժնի վարիչ Մելս Հակոբջանյանը: Հիշյալ ծրագրերի թվում մասնավորապես կարելի է նշել ղարաբաղյան պատերազմի հաշմանդամներին բուժման ուղարկելու, ժողովրդական կրթության ավերված օբյեկտների վերականգնման, հանրապետության բուժհիմնարկները բժշկական սարքավորումներով ու գույքով ապահովելու համալիր միջոցառումները եւ այլն:

«Ներկայումս սոցիալական կարիքների համար նախատեսված միջոցները ուղղված են սակավ ապահովված ընտանիքների երեխաներին օգնելուն, որոնց ամենամսյա նպաստ է տրվում: Իրականացվում է ԼՂՀ պաշտպանության բանակի մարտիկների հաշմանդամների համար պրոթեզավորման, պրոթեզների նորոգման ծրագիրը: Շարունակվում է ադրբեջանական ռմբակոծումից տուժած բնակավայրերի, մասնավորապես Թալիշ գյուղի, ինչպես նաեւ ողնուղեղի վնասվածքներով հաշմանդամների համար Ստեփանակերտի վերականգնման կենտրոնի վերանորոգման աշխատանքները: Կան նաեւ այլ ծրագրեր, որոնց իրականացման համար մենք հիմա աշխատում ենք», նշեց բաժնի վարիչը: Սփյուռքից ստացված միջոցները օգտագործվում են ԼՂՀ ՊԲ զոհված մարտիկների եւ սպաների երեխաներին օգնելու, եւ «Ձմեռ 96» ծրագրի շրջանակներում հանրապետության ժողկրթության եւ առողջապահության օբյեկտների վերականգնման համար:

ԳՈՐԾՈՒՂՈՒՄ

Նյուվադին Մեղրու մոռացված անկյունն է

Մեր թղթակցի «Գործուղում Մեղրի» շարքից ընթերցողի ուշադրությանն ենք ներկայացնում Մեղրու շրջանի Նյուվադի գյուղի գյուղխորհրդի նախագահ Մեխակ Զարգարյանի խոսքը:

Նախկին գետաշենցի եմ, մի խումբ հայրենակիցներիս հետ բնակության եմ տեղափոխվել Նյուվադի այն բանից հետո, երբ այն ազատագրվեց ազերիներից: Սկզբում եղել եմ կազմկոմիտեի նախագահ, իսկ երբ գյուղը բնակեցվեց, 1994-ից դարձել եմ գյուղխորհրդի նախագահ: Այսօր Նյուվադիում կա 65 տնտեսություն: Շատ ավելին կարող ենք տեղավորել, նույնիսկ դատարկ տներ ունենք, բայց դրանք անմիջապես բնակեցման ենթակա չեն, մեղմ ասած՝ վերանորոգման կարիք ունեն:

Մեր բնակիչներն զբաղվում են գյուղատնտեսությամբ: Բայց այս տարի կարծես Աստծո կողմից պատժված ենք. տեւական երաշտ էր, հետո էլ կարկտահարություն եղավ, դրան հաջորդեց ջրհեղեղը: Գյուղամիջյան ճանապարհը լրիվ շարքից դուրս է եկել: Ցավն այն է, որ շրջանից ու շրջկենտրոնից էլ ենք գործնականում կտրված: Միակ ճանապարհը, որով կարողանում ենք գնալ Մեղրի, ներքեւի, այսպես կոչված «կատերով» անցնող ճանապարհն է, այն էլ չափազանց վտանգավոր է, անցնում է Արաքսի զառիթափ կիրճերով: Դրա համար էլ շրջկենտրոնի հետ ավտոբուսային կապ չկա, գնում-գալիս ենք միայն ամենագնացներով: Մենք որ եկանք, 1991-ին, մեզ ասում էին, որ նոր ճանապարհը շահագործման կհանձնվի մի երկու ամսվա ընթացքում: Դրա շինարարության համար 60 միլիոն ռուբլի էր նախատեսված: Դրանից, որքան գիտեմ, միայն 20 միլիոնն իրացվեց, եւ այդպես էլ այդ ճանապարհը գոյություն չունի: Մինչդեռ այն չափազանց կարեւոր դեր կարող էր կատարել ոչ միայն Նյուվադիի բնակիչների համար, այլեւ ողջ շրջանի, որովհետեւ կարող էր ծառայել իբրեւ Մեղրի-Ղափան-Գորիս շրջանցիկ կապի միջոց, երբ հիմնական ճանապարհը շարքից դուրս գա, ինչը հաճախ է պատահում հատկապես ձմռանը: Դրանով կարելի է Նյուվադիից դուրս գալ միանգամից դեպի Խնձորեսկ եւ Գորիս, եւ երբ հաշվի առնենք, որ այժմ Նյուվադին Հայաստանի Հանրապետության ամենածայրամասային գյուղն է, ապա պարզ կդառնա, որ այդ ճանապարհը մեր հանրապետության համար ձեռք է բերում ռազմավարական նշանակություն: Ինչեւէ, ես, կարծես, շատ խորացա այդ հարցում, որովհետեւ դառնության զգացում ունենք, կարծես թե մոռացված անկյուն ենք, աչքից հեռու, սրտից հեռու...

Երբ նոր էինք բնակություն հաստատել Նյուվադիում, երբ ազերիներն անընդհատ գնդակոծում էին մեր դիրքերը եւ արկերն ուղղակի ընկնում էին գյուղի կենտրոն, խփում տներին, այն ժամանակ ավելի շատ բնակիչ ունեինք, քան հիմա: Ուզում եմ ասել՝ գյուղի նկատմամբ անտարբերությունն ավելի սարսափելի դուրս եկավ, քան պատերազմական վտանգը: Մեզ մոտ ե- [illegible] ուշադրության չի արժանանում ոչ շրջանի, ոչ հանրապետական այլ մարմինների ղեկավարների, նույնիսկ՝ փախստականների կոմիտեի կողմից: Նավթը, այլ կարգի օգնությունները, իհարկե, ստանում ենք, բայց մինչեւ գալիս տեղ են հասնում՝ հոգիներս բերաններս է հասնում: Կարող եմ պարզ ասել՝ մեզ պետք չէ նրանց ուղարկած մթերքը, ամենակարեւորը հոգեկան սատարումն է, որ չենք զգում: Չունենք ոչ հեռուստացույց, ոչ ռադիո, ոչ հեռախոսակապ: Աշխարհից լուրեր ենք ստանում ձեռքի ռադիոընդունիչներով: Այնքան մոռացված ենք, որ մեզ մոտ նույնիսկ հողի սեփականաշնորհումը մինչեւ վերջ իր իրավաբանական լուծումը չի ստացել: Մեզ թույլատրեցին հողը բաժանել, մենք դա արեցինք, մարդիկ հող ստացան եւ այժմ դա մշակում են, դրանից օգտվում են, բայց օրենքով սեփականատեր չեն: Գիտեն, իհարկե, որ դա իրենցն է, յուրաքանչյուր ծուխ ստացել է 3800 քառ. մետր հողատարածք, 1000 մետր վարելահող, 1000 մետր խաղողի այգի: Բայց այդ այգիների մեծամասնությունը չի ջրվում: Պոմպակայանները նորմալ չեն աշխատում, այս տարի ջուրը տվին մեծ ուշացումներով: Փոխարենը այսօր մեր գյուղացին օգտագործում է իր տնամերձը եւ սեփականաշնորհված այն տարածքները, որոնք հնարավոր է ջրել արտեզյան ջրերով: Այնպես որ՝ մեր բերքը շատ քիչ է... Վարչապետ Հրանտ Բագրատյանը մի անգամ երկու տարի առաջ եկավ մեր գյուղ, ծանոթացավ մեր կյանքին: Գնալուց հետո մեզ մի «ՈՒԱԶ» մակնիշի ավտոմեքենա նվեր ուղարկեց: Բայց Մեղրու շրջգործկոմի նախագահ Ավետիք Արիստակեսյանը կարողացավ կարճ ժամանակում այդ ավտոմեքենան մեզանից վերցնել. վաշտին մեքենա էր պետք, եւ հանկարծ պարզվեց, որ այդ նպատակի համար շրջանում ուրիշ ավելի հարմարը չկար...

Մի խոսքով, դժվար ենք ապրում, մշակում ենք մեր հողերի 30 տոկոսից պակասը: Դպրոց ունենք, 32 աշակերտով, ուսուցիչների խիստ կարիք ունենք: Պետք է հարցնել՝ ոչ թե ի՞նչ ուսուցիչներ չունենք, այլ՝ ի՞նչ ունենք: Եթե այսպես գնա՝ գյուղը կդատարկվի: Իսկ մեզ, մեր պետությանը որքա՞ն է անհրաժեշտ, որ Նյուվադին աճի, զարգանա, ամրանա: Այստեղ ուղղիչ աշխատանքային գաղութ են հիմնել, բայց գյուղին չի կարելի նայել որպես... գաղութի: Մարդիկ այստեղ արմատ արձակել են ուզում: Հարսանիքներ ենք արել, երեխաներ են ծնվել... Գյուղում արմատակալելու նրանց այս ձգտումը պետք է պաշտպանել: Պատկերացնում եք, խանութ անգամ չունենք, բուժկետ ունենք՝ բժիշկ չունենք: Ի՞նչ ավելացնեմ, [illegible] ձեզ նման էլի են եկել, գրել-գնացել են, ի՞նչ է փոխվել: Այնինչ այստեղ շատ փոքր ուշադրության դեպքում հիմնական գյուղ կարելի է ստեղծել, անասնապահության համար խիստ նպաստավոր տեղ է, մինչդեռ [illegible] խոշոր եղջերավոր անասուն հազիվ ունենք: Այսպես գյուղ չեն պահի:

ՍՈՖԻԿ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

1937

Հայ եկեղեցականները ստալինյան բռնությունների զոհ

Տէր-Թադէ եպիսկոպոս Հարությունյան

30-ական թվականների բռնությունների զոհ դարձած հայ հոգեւորականների մասին ԱԱՆ հասարակայնության եւ մամուլի հետ կապերի ծառայության պետ Արմենակ Մանուկյանի պատրաստած շարքի երկրորդ նյութը 1937 թ. գնդակահարված Տէր-Թադէ եպիսկոպոս Հարությունյանի ձերբակալության եւ հարցաքննությունների պատմությունն է: Տէր-Թադէ եպիսկոպոսը 1909 թվականին ցարական իշխանությունների կողմից ձերբակալվել է ժանդարմ-ռոտմիստր Մելիք-Շահնազարովի սպանությանը մասնակցելու կասկածով եւ ազատ է արձակվել մեկ տարի անց՝ անմեղ լինելու համար: 1921 թ. ձերբակալվել է Նոր Բայազետի քաղվարչության կողմից եւ երեք ամիս անց ազատ արձակվել: Նման կենսագրություն ունեցող եւ, ընդհանրապես իր էությամբ աչքառու բարձրաստիճան հոգեւորական Թադէ եպիսկոպոսը չէր կարող վրիպել ամենատես Գլխավոր քաղվարչության աչքից: Գործում եղած փաստերը շատ խոսուն են հատկապես հետաքրքիր է նրա հարցաքննությունների բովանդակությունը, որոնց հետ այժմ կծանոթանանք:

ՀՀ ԱԱՆ արխիվ, կարճված գործերի ֆոնդ գ. հ. 9668

Հարությունյան Թադեւոս (Թադէ) Մարտիրոսի, ծնվել է 1885 թ. Երեւանում, ծառայել ու ապրել է Էջմիածնի վանքում, եպիսկոպոս, կրթությունը միջնակարգ, ավարտել է Երեւանի հոգեւոր ճեմարանը: Ձերբակալվել է 1936 թվականի օգոստոսի 24-ին:

Հարցաքննության արձանագրություն
24 օգոստոսի 1936 թ.

– Երեւանի հայ-հոգեւորական ճեմարանում ուսանելու տարիներին եղե՞լ եք Դուք դաշնակցական աշակերտական երիտասարդական միության մեջ:

– Երեւանի հոգեւոր ճեմարանի դաշնակցական աշակերտական երիտասարդական միությունն ինձ, որպես կարիքավոր աշակերտի, ցույց էր տալիս նյութական օգնություն, եւ որպես ընդունակ աշակերտ մասնակցում էի նրանց կազմակերպած երեկոներին, համերգներին, բայց պաշտոնական երիտասարդական միության անդամ չեմ եղել:

– Ժանդարմ-ռոտմիստր Մելիք-Շահնազարովի նկատմամբ դաշնակցական ահաբեկչության համար Դուք ձերբակալվել եք ցարական կառավարության կողմից, հետեւապես Դուք ձերբակալվել եք ինչպես հայտարարեցիք, «կասկածվելով որպես դաշնակ, ահաբեկչության մասնակի՞ց»:

– Ես դաշնակցական կուսակցությունում չեմ եղել: Այն ժամանակ ես ուսուցիչ էի: Ահաբեկչության ժամանակ, ես իմ ընկերոջ, ուսուցիչ Հակոբ Հակոբյանի սենյակում (այժմ եպիսկոպոս Հակոբյան Վրթանես) Էջմիածնում նարդի էի խաղում, հանկարծ մեզ մոտ մտան ժանդարմները, մեզ եւ կուսիս էլ ձերբակալեցին եւ մեղադրեցին, որ մենք իբր թե օգնություն ենք ցույց տվել ահաբեկիչներին, որոնք փախել են այս բակով եւ թաքնվել: Նստելով մի ամբողջ տարի, զինվորական դատարանով ես եւ վերոհիշյալ ընկերը արդարացվեցինք եւ ազատ արձակվեցինք:

– Որտե՞ղ եք Դուք եղել դաշնակցական, փետրվարյան արկածախնդրության ժամանակ 1921 թ. եւ ի՞նչ մասնակցություն եք ցույց տվել արկածախնդրությունում:

– Դաշնակցական փետրվարյան արկածախնդրության ժամանակ 1921 թ. ես գտնվում էի Ն. Բայազետում, որպես առաջնորդական տեղապահ, վարդապետի աստիճանով: Ոչ մի մասնակցություն չեմ ունեցել այդ արկածախնդրությանը: Հիշում եմ, այն գրավել էր գեներալ Միլիկովը, նա էլ ձերբակալեց բոլշեւիկ Սարուխանովին, որի մոտ ես հաճախ էի գնում, որպես գործընկեր ուսուցչի:

– Դուք տալիս եք ոչ ճիշտ ցուցմունքներ, եթե հաճախ էիք գնում բոլշեւիկ Սարուխանովի մոտ, ապա դաշնակները կբռնադատեին Ձեզ, բայց դա չեղավ, այսինքն բռնադատման չենթարկվեցիք նրանց կողմից, որովհետեւ դաշնակ էիք, որի համար արկածախնդրության ճնշումից հետո Դուք ձերբակալվեցիք Ն. Բայազետի ԳՔՎ-ի կողմից, որի ժամանակ Ձեզ մոտ հայտնաբերեցին զենք: Քննությունը պահանջում է ճիշտ ցուցմունքներ:

– Ես դաշնակցական երբեք չեմ եղել: Ճիշտ է, որ դաշնակցականների կողմից բռնությունների չեմ ենթարկվել, հոգեւոր անձերի նկատմամբ դաշնակցական զգույշ էին: Ճիշտ է, որ Ն. Բայազետում իմ ձերբակալման ժամանակ ԳՔՎ-ն հայտնաբերել է ինձ մոտ երկու ատրճանակ («Բրաունինգ»), ինչի համար ես նստեցի երեք ամիս եւ 1922 թ. փետրվարի [illegible] ազատվեցի: Ինձ մեղադրեցին [illegible] զենք պահելու մեջ:

– Ինչո՞ւ էիք Դուք զենքը պահում գաղտնի:

– Ես չգիտեի օրենքը, որ արգելվում է զենքը պահել գաղտնի, բայց քանի որ ես շատ էի սիրում զենք, ուստի եւ պահում էի, ինչի համար կրել եմ պատիժ:

1936 թ. սեպտեմբերի 9-ի եւ սեպտեմբերի 17-ի հարցաքննությունների ժամանակ Տէր-Թադէ եպիսկոպոսից հետաքրքրվում են իր աշխարհական ծանոթների մասին, որոնց հետ նա վարել է հակախորհրդային զրույցներ: Նա մի քանի ընդհանուր պատասխաններ է տալիս իր հատ ու կենտ ծանոթների մասին: Նշված հարցաքննություններից երկրորդի ժամանակ քննողը պնդում է, որ նա ափսոսանք է հայտնել Ա. Խանջյանի մահվան առնչությամբ՝ բերելով նրա հետեւյալ խոսքերը. «Խանջյանը խոշոր ուժ էր, ինչից մենք զրկվեցինք, նա Հայաստանի համար անփոխարինելի, օգտակար մարդ էր, ափսոս, որ մենք նրան կորցրինք»:

Բայց Տէր Թադէն ժխտում է բոլոր հարցադրումները եւ զուցե մտածելով, թե իրեն կօգնի, որպես մեղմացուցիչ հանգամանք, խոստովանում է, թե ինքը չարաշահել է ալկոհոլային խմիչքների օգտագործումը, քանի որ խմել շատ է սիրում, այդ առումով, հարցն այն աստիճան է լրջացել, որ ինքը նույնիսկ կաթողիկոսին է խոստացել որ այն չի չարաշահի այլեւս:

Հարցաքննության արձանագրություն
26 սեպտեմբերի 1936 թ.

– Ինչպես բացատրել, որ Էջմիածնի վանքի միաբաններից (կրոնի ծառայողներից) բոլորից շատ Դուք էիք գնում զբոսնելու Էջմիածնի ջրավազանի շուրջը, որտեղ գնում էին զբոսնելու Էջմիածին-Վաղարշապատի աշակերտները:

– Ճիշտ է, ես հաճախ էի լինում ջրավազանի մոտ, գրեթե ամեն օր աղոթքից հետո գնում էի այնտեղ նայելու արեւի մայրամուտը: Գրեթե միշտ իմ շուրջը հավաքվում էր երիտասարդությունը, ուսանողները եւ այլ քաղաքացիներ, տարբեր հարցեր էին տալիս հայ ազգի պատմությունից, միայն ոչ քաղաքական բովանդակությամբ:

– Ի՞նչ հարց էին տալիս Ձեզ, հայ ազգի պատմության շուրջը Ձեր կողմից կազմակերպված հաճախակի զրույցների ժամանակ:

– Ինձ այդ զրույցների ժամանակ հարցնում էին՝ «Ինչո՞ւ է հայ ազգն անվանվում «Հայկազյան ժողովուրդ», ինչո՞ւ են հայերը հենց այս երկրում բնակվել եւ այլ հարցեր հայկական թագավորների, ազգամիջյան պատերազմների... մասին»: Ես նրանց բացատրություններ էի տալիս այնպես, ինչպես անցել էի ուսման տարիներիս հայ ազգի պատմությունն ըստ «Խորենացու» եւ «Բաղասանյանի» (հայ ազգայնական պատմաբաններ), (հավանաբար փակագծերում ավելացվել է հարցաքննողների կողմից-Ա. Մ.):

– Ուրեմն, Դուք երիտասարդ սովորողներին քարոզում եւ գովերգում էիք հայ ազգի առասպելական-ազգայնական պատմությունը:

– Երիտասարդության հետ այդ բովանդակությամբ զրույցներ վարելիս, ես ելնում էի այն դրույթից, որ «ներկան» հասկանալու համար պետք է իմանալ «անցյալը», այնպես ինչպես կարդացել եմ «Իզվեստիայում» տպված հոդվածում, որտեղ նշված էր, որ մեր սովորողները պետք է գիտենան ժողովուրդների անցյալ պատմությունը:

– Հետաքննությունը տվյալներ ունի, որ Դուք Ձեր հաճախակի զրույցներով նպաստել էիք հետաքրքրվող երիտասարդների ու սովորողների մեջ բորբոքելու ազգայնական տրամադրություններ: Հետաքննությանը բացատրեք, ո՞ւմ հանձնարարությամբ էիք Դուք ազգայնական քաղաքականություն վարում:

– Իմ կյանքի դաստիարակությունն ինձ ստիպում էր ազատ ժամանակս անցկացնել ջրավազանի մոտ, հետո իմ գրաված պաշտոնից ելնելով՝ ինչն է վանքի ու պահոցի ղեկավարի (պատմական թանգարանի վարիչ), ունեի մեծ հնարավորություն ծանոթ լինելու զանգվածների հետ, ուստի ինձ միշտ շրջապատում էին ջրավազանի շուրջը զբոսնող ծանոթները եւ հարցեր էին տալիս, իսկ ես ինչ պատասխանում էի նրանց այնպես, ինչպես հասկանում էի, ոչ ոք ինձ հանձնարարություն չի տվել, եւ ես քարոզչություն չէի տանում, այլ միայն զրուցում էի:

– 1936 թ. ամռանը ջրավազանի մոտ երիտասարդների հետ զրույցներից մեկի ժամանակ Դուք ի՞նչ եք խոսել Հայաստանի տարածքների վերաբերյալ:

– Ես ճիշտ չեմ հիշում, թե երբ եւ ում հետ եմ զրուցել Հայաստանի տարածքների վերաբերյալ, բայց հնարավոր է, ինչքանով ես եմ հիշում, երբ խոսք է գնացել «Արարատի» գեղեցիկ սարերի մասին, ես զրուցակիցներիս պատմել եմ հայ ուսուցիչների խմբի հետ իմ էքսկուրսիայի մասին «Արարատի» սարերում, ես նկարագրել եմ սարերի եւ Հայաստանի նախկին սահմանների գեղեցկությունը, «Վասպուրականի» (Վանի նահանգ) բնության սիրունությունը, խոսել եմ Հայաստանի տասներկու նահանգների մասին, որոնց մեծ մասը գավթել է Թուրքիան, Հայաստանի աշխարհագրության վրա եմ հենվել...:

– Ի՞նչ եք խոսել Ձեր երիտասարդների հետ զրույցների ժամանակ հայ կամավորական ջոկատների մասին:

– Ինձ հարց են տվել. «...Ճի՞շտ են վարվել դաշնակները կազմակերպելով եւ թուրքական ճակատ ուղարկելով կամավորական ջոկատներ»: Իսկ պատասխանել եմ. «... Այդ քաղաքականությունը ճիշտ չէր, այդ ջոկատների ուղարկումն ավելի գրգռում էր Թուրքիային, որի հետեւանքով թուրքական Հայաստանի գեղեցիկ մասը վերածեցին անապատի, իսկ ժողովուրդը ենթարկվեց ցեղասպանության»:

– Այդ կապակցությամբ ինչ անալոգիա եք անցկացրել Դուք Իտալո-Հաբեշստանյան պատերազմի հետ:

– Հավանաբար ասել եմ, որ Հաբեշստանի հայերը խելոք են վարվել, որ մեր օրինակով չեն կազմակերպել կամավորական ջոկատներ օգնելու համար Հաբեշստանին եւ պահպանեցին ազգը...

– Այդ զրույցի ժամանակ Դուք ի՞նչ եք ասել ՀԿ(բ)Կ ԿԿ նախկին քարտուղար Խանջյանի ինքնասպանության ակտի կապակցությամբ:

– Հաստատ չեմ հիշում, բայց հավանաբար ցավ եմ հայտնել երիտասարդ նվիրված աշխատողի կորստի մասին: Ընդհանրապես ընդունված է մահից հետո մարդկանց մասին վատ բաներ չասել, ինչով եւ ղեկավարվել եմ ես...:

– Ելնելով վերոշարադրվածից, Դուք խոստովանո՞ւմ եք, որ Ձեր հաճախակի զրույցներով վարել եք ազգայնական քաղաքականություն:

– Ես մտածված ձեւով չեմ վարել ազգայնական քաղաքականություն, այլ միայն պատասխանել եմ իմ շրջապատին, ծանոթներին ու անծանոթներին, երիտասարդ մարդկանց եւ սովորողներին հետաքրքրող հարցերին:

Հարցաքննության արձանագրություն
10 նոյեմբերի 1936 թ.

Հարցաքննությունը հիմնականում գնում է այն մասին, թե ինչ է ասել նա նոր Սահմանադրության մասին: Մասնավորապես, որ նա զրույցի ժամանակ մի թերթի խմբագրի հետ, հարցեր է բարձրացրել, թե կտպեն իր հոդվածը եպիսկոպոս Թադէ ստորագրությամբ, մերժողական պատասխան է տվել: Այդ դեպքում ինչպե՞ս հասկանալ Սահմանադրության մեջ նշված խղճի ազատության մասին հոդվածը. հարցրել է նա:

Հետո հարց է տրվում, թե ի՞նչ միտք է նա այդ զրույցի ժամանակ հայտնել հրեական ազգի մասին:

– Չեմ հիշում ինչ առիթով ես ասել եմ, որ հրեական ազգը վատ ազգ է, քանի որ նրանք հուդայական են եւ քրիստոնյաների հակառակորդը:

– Դուք խոստովանո՞ւմ եք, որ այդ զրույցով արտահայտել եք հակախորհրդային ազգայնական հայացքներ, հատուկ քարոզչություն վարելու նպատակով:

– Ես չեմ զգացել, թե վարում եմ հ/խ ազգայնական զրույց, այլ համարել եմ ու համարում եմ, որ վարել եմ սովորական հասարակ զրույց, այլապես ես չէի խոսի:

Հարցաքննության արձանագրություն
20 նոյեմբերի 1936 թ.

Հարցնում են, թե ի՞նչ ազգային ու կրոնական գրքեր է տարածել միջնակարգ դպրոցի աշակերտների ու Վաղարշապատի բնակիչների մեջ:

Պատասխանում է, որ դպրոցականներից մեկին տվել է «Թուրքական Հայաստանի բանաստեղծությունների ժողովածուն», իսկ մի քաղաքացու ժամանակավոր «Նարեկ» (աղոթագիրք):

Խոստովանում է, որ հեքիմությամբ է զբաղվել, քանի որ ֆանատիկ հավատացյալներին մերժել չէր կարող:

Այցելուներին պատմել է Էջմիածնի եկեղեցու մասին, որը դարերով դիմացել է փորձություններին. «Եկեղեցին այնուամենայնիվ մնացել է եւ չի քանդվել ու հիմա մենք տեսնում ենք նրան մեր աչքերով, թե ինչպես է այն հասել մեր դարաշրջան»:

Հարցաքննության արձանագրություն
25 հունիսի 1937 թ.

– Ի՞նչ հ/հեղափոխական ազգայնական զրույցներ եք վարել Դուք հ/հ տարր, այժմ ձերբակալված եպիսկոպոս Տէր-Միքաելյան Իսահակի հետ:

– Եպիսկոպոս Տէր Միքաելյան Իսահակի հետ ես ունեցել եմ զրույցներ կրոնական հարցերի շուրջը: Նրա հետ հ/հ ազգայնական խոսակցություններ չեմ ունեցել:

– Դուք ճիշտ չեք խոսում: Տէր-Միքաելյանի հետ Դուք քննարկել եք արտասահմանյան թեմերի եւ նրանց առաջնորդների հարցը, գովելով դաշնակ, խորհրդային իշխանության թշնամի, Թավրիզի եպիսկոպոս Ներսես Մելիք-Թանգյանին:

– Եպիսկոպոս Մելիք Թանգյանի մասին իմ եւ եպիսկոպոս Իսահակի միջեւ եղել է խոսակցություն այն հարթության վրա, որ ես գովել եմ նրան, որպես պատրաստված, նվիրված հոգեւորական ղեկավարի: Նրա քաղաքական հայացքները ես չեմ գովաբանել:

– Այլ ի՞նչ քաղաքական հարցեր եք քննարկել միասին:

– Հատուկ չեմ կարող հիշել: Հնարավոր է խոսել ենք հայ հին գրականության, նրա մշակույթի, պատմության մասին եւ այլն:

– Ինչպիսի՞ հարաբերություններ եք ունեցել հ/հ տարր, այժմ ձերբակալված, քաղաքացի Բաղայան Մելիքի հետ:

– Բ. Մը նույնպես հավատացյալ է... դերձակ է...: Ինձ եւ այլ հոգեւորականների մոտ գալիս էր որպես դերձակ...: Նրա հետ քաղաքական զրույցներ չեմ վարել:

Այնուհետեւ պնդում են, որ խոստովանի, բայց չի ընդունում:

– Ընդունո՞ւմ եք Դուք ձեզ մեղավոր այն բանում, որ լինելով հ/խ ազգայնական տրամադրված անձ հանդիպել եք եւ կիսել Բաղալյան Լեւոնի, Դովլաթյան Գեւորգի, Բալայան Լ.-ի եւ այլոց հ/հ հայացքները:

– Ես այդ մարդկանց հետ չեմ ունեցել սիստեմատիկ [illegible] կապեր: Նրանց հետ եղել ենք լոկ գլխարկի ծանոթներ եւ չեմ կիսել նրանց հայացքները, այլ եղել եմ պասիվ լսողի դերում:

Այժմ ներկայացնենք մեղադրական եզրակացության հիմնական բովանդակությունը կազմված Հայկական ԽՍՀ ՆԳԺԿ-ի անվտանգության վարչության չորրորդ բաժնի կողմից, որ հաստատվել է 1937 թ. նոյեմբերի 29-ին:

ՄԵՂԱԴՐԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

... Եպիսկոպոս Տէր Թադեւոս Մարտիրոսի Հարությունյանը ուսանողության տարիներին ք. Երեւանում եղել է երիտասարդական դաշ միության մեջ: 1921 թվին դաշնակցական փետրվարյան արկածախնդրության ճնշումից հետո ձերբակալվել է նախկ. Ա. Հ-ի (Արտակարգ հանձնաժողով-Ա. Մ.) կողմից, ընդ որում խուզարկության ժամանակ նրա մոտ հայտնաբերվել է երկու ռեւոլվեր «Բրաունինգ» սիստեմի:

Իր, Էջմիածնի վանքում գտնվելու ժամանակ, երկար տարիներ կապեր էր պաշտպանում նախկին դաշնակների, հ/հ (հակահեղափոխական-Ա. Մ.) տարրերի հետ եւ պարբերաբար վարում էր բուն հակախորհրդային, ազգայնամոլական ագիտացիա քաղ. Վաղարշապատի հավատացյալ ու անհավատ քաղաքացիների մեջ այն մասին, որ Հայաստանի սահմանները խիստ նեղացված են, Էջմիածնի եկեղեցին եւ հավատը հետապնդվում են խորհրդային իշխանությունների կողմից, «բայց բոլոր արհավիրքները անցել են, կանցնեն եւ այս արհավիրքները, շուտով չի լինի խորհրդիշխանությունը»: Տարածում էր պրովոկացիա այն մասին, որ Խանջյանին (ՀԿ(բ)Կ ԿԿ նախկին քարտուղար) սպանել են վրացիները, պնդում էր, որ Խանջյանի մահը կորուստ էր հայ ժողովրդի համար, որ Ստալինյան Սահմանադրությունը ձեւական է, իսկ իրականում չկա խոսքի եւ մամուլի ազատություն: Սովորողների մեջ տարածում էր հ/հ ազգայնամոլական եւ եկեղեցական գրքեր: Բաց հայտարարում էր, որ պատրաստ է ինքնասպան լինել, միայն թե ազատվի խորհրդիշխանություններից եւ կոմունիստներից (հայհոյանք):

Հարությունյան Տէր Թադեւոսը 1933 թվից կապ էր պաշտպանում հ/հ ազգայնամոլական կազմակերպության (այժմ ջախջախված) անդամների հետ եւ կողմնակից էր Հայաստանում դաշնակցական իշխանության վերականգնմանը:

Հետեւությունն արդեն ակնհայտ է, Տէր Թադէի մեղադրանքով քննչական գործը հանձնել Հայկական ԽՍՀ ՆԳԺԿ «եռյակի» քննարկմանը, որին իսկույն 1937 թ. դեկտեմբերի 2-ին հետեւում է վերոհիշյալ «եռյակի» չարագույժ որոշումը՝

Գնդակահարել *Թադեւոս (Թադէ) Մարտիրոսի Հարությունյանին, անձամբ նրան պատկանող իրերը բռնագրավել:*

Ինչպես վկայում է Հայկական ԽՍՀ ՆԳԺԿ Անվտանգության վարչության 8 բաժնի կազմած արձանագրության քաղվածքը, Թադեւոս Թադէ Մարտիրոսի Հարությունյանը գնդակահարվել է 1937 թ. դեկտեմբերի 6-ի գիշերվա ժամը երկուսին:

Ուշագրավ է այն հանգամանքը, որ գործում եղած նյութերից երեւում է, որ Տէր Թադէ եպիսկոպոսը, չնայած հայտնի պայմաններին, այդպես էլ չի ընդունում իրեն ուղղված մեղադրանքները:

Նա արդարացվել է 1989 թ. հունվարի 16-ի ՀԽՍՀ Գլխ. դատախազության «30-40-ական թվականներին եւ 50-ական թվականի սկզբներին ռեպրեսիայի զոհերի նկատմամբ արդարության վերականգնման լրացուցիչ միջոցառումների մասին» հրամանագրի 1-ին հոդվածի համաձայն:

ԱՐՄԵՆԱԿ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Չնայած Իսրայելի եւ Եգիպտոսի միջեւ կնքված խաղաղության պաշտոնական դաշինքին, երկու տասնամյակների երկու պատերազմների թողած ժառանգությունը դեռեւս թողնում է ցավագին հետքեր: Եգիպտոսում աճող հակաիսրայելական տրամադրություններին վերջերս ավելացան նաեւ իսրայելցի զինվորների կողմից գործընթացում:

Իսրայելցիների համար, որոնք հպարտանում են իրենց զինված ուժերի բարոյականությամբ, այդ մերկացումը խորապես անհանգստացնող է: Պաշտոնական շրջանակները ափսոսանք ու ցավակցություն հայտնելով նշել են, որ իսրայելցի գեներալ Արիեհ Բիրոն խոստովանել է, որ 1956 թ. Սինայի պատերազմա-

Իսրայելից պաշտոնապես ներողություն խնդրել, դեպքերի կապակցությամբ հետաքննություն անցկացնել պատժել մեղավորներին եւ փոխհատուցել իսրայելցիների կողմից սպանված յուրաքանչյուր զոհի ընտանիքին: Անցյալ ամիս Իսրայելի գլխավոր դատախազ Մայքլ Բեն-Յաիրը հայտարարել է, թե 1956 թ. եւ 1967 թ. միջադեպերի համար

ՄԵՐՁԱՎՈՐ ԱՐԵՎԵԼՔ

Եգիպտոս-Իսրայել 1967թ. պատերազմ

Իսրայելցիների դաժանությունների ապացույցը սպառնում է այդ երկրների փխրուն հարաբերություններին

1967 թ. պատերազմի ժամանակ եգիպտական ռազմագերիների կոտորածների նոր բացահայտումները: Էլ Արիշի Սինա քաղաքից դուրս երկու գերեզմանոցների հայտնաբերումը պարզեց, որ 1956 թ. եւ 1967 թ. պատերազմների ժամանակ տեղի են ունեցել անզեն եգիպտացիների զանգվածային սպանություններ:

Մակերեսային թաղումների վայրերի հետազոտությունները կազմակերպել էր կիսապաշտոնական «Ալ Ահրամ» թերթը եւ դրանք ղեկավարում էր 55 տարեկան Աբդել Սալամ Մուսան օդուժի նախկին սպա, որ 1967-ի պատերազմի ժամանակ իսրայելցիների կողմից գերեվարվել էր: Հետազոտողների գնահատմամբ, առաջին գերեզմանոցում թաղված էին մոտավորապես 90 մարդկանց մնացորդներ: Հիշելով սպանությունները, Մուսան «Ալ Ահրամ»-ին պատմել է. «Տեսա գերիների մի խումբ, որոնց վրա կրակ բացեցին իսրայելցիները: Հետո մեզ հրամայեցին թաղել»: Նման գնդակահարությունների մեկ այլ վկա՝ տեղացի մի բեդվին Սոլիման Սալամա անունով, ցույց էր տվել 27 կմ հեռավորությամբ մեկ այլ գերեզման, որտեղ ասել է, թե ինչպես իսրայելցիները սպանել են 30 եգիպտացի զինվորների նրանց շրջապատելուց հետո:

Եգիպտոսում մեծ իրարանցում առաջացրեցին թերթերում զետեղված այդ կոտորածների լուսանկարները: Ընդդիմադիր կուսակցությունները եւ թերթերը պահանջում են պրեզիդենտ Մուբարաքից ժամանակավորապես խզել Իսրայելի հետ դիվանագիտական հարաբերությունները մինչեւ գնդակահարությունների վերաբերյալ լրիվ հետաքննություն անցկացնելը: Եգիպտոսի պետական լրատվական ծառայության տնօրեն Նաբիլ Օսմանն արձագանքելով դրան ասել է. «Սա շատ լուրջ հարց է: Ճշմարտությունը պետք է բացահայտվի: Նման ոճրագործությունները մարդկության դեմ են եւ դրանք չպիտի անուշադրության մատնվեն»:

Հենց նման թշնամական զգացումների վերակենդանացումը սպառնում է փչացնել Կահիրեի եւ Թել Ավիվի հարաբերությունները եւ ավելին՝ փլուզել դիվանագիտական դաշինքը, որը էական դեր է խաղում Միջին Արեւելքում սահմանային համաձայնության հասնելու

վի ժամանակ մահապատժի է ենթարկել 49 եգիպտացիների: Այս մերկացումից հետո մի շարք իսրայելցիներ, որոնք գերիների մահապատժի վկաներ են, առաջարկել են իրենց օգնությունը: «Յեդիոթ Ահարոնոթ» թերթը շտապեցնում էր կառավարությանը հետաքննություն անցկացնել, որպեսզի ոչ միայն հանգստացնեն եգիպտացիներին, այլեւ այն կասեցնեն «հենց հանուն մեր իսկ խղճի, մեր հավատքի, մեր սկզբունքների»: 69 տարեկան Բիրոն պատմել է, որ նրան հրամայված էր առաջանալ, բայց հնարավորություն չուներ իր հետ տանելու եգիպտացի գերիներին: Նա չէր կարող նրանց բաց թողնել, վախենալով, որ վերջիններս կարող են իրենց ընկերներին առաջնորդել դեպի իսրայելցիների դիրքերը: Այդ պատճառով սպանել էր նրանց: Նա ցավում է իր գործողությունների համար, բայց ասել է, որ «այդ հանգամանքներում ուրիշներն էլ նույնը կանեին»:

Հակառակ Եգիպտոսում աճող զայրույթին, Իսրայելում արձագանքն ավելի հանդարտ է: Արտաքին գործերի նախարարության խոսնակ Յիգալ Պալմորն ասում է. «Մենք գիտենք, որ անցյալում իսրայելցի գերիները նույնպես սպանվել են: Անկախ մեր կամքից, դաժանությունները պատերազմի անխուսափելի մասն են: Եգիպտացիները չեն կարող պահանջել բարոյական փոխհատուցում՝ քննադատելով մեզ եւ անտեսելով այն ամենը, ինչ իրենք են արել»:

Եգիպտացիները պահանջում են զինվորականներին դատական պատասխանատվության ենթարկելու հիմքեր չկան 20 տարվա վաղեմության պատճառով: Պատերազմի ժամանակ հանցագործությունների միակ օրենքը Իսրայելում վերաբերում է ցեղասպանության կամ երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ նացիստների կողմից կատարված հանցագործություններին: Թեեւ ռազմագերիների գնդակահարությունները «հակաօրինական» եւ «անհանդուրժելի» են, ասել է նա, բայց դրանք չեն կարող դիտարկվել որպես այս օրենքով դատապարտվող հանցագործություն:

Այս պատճառաբանությունը ցավոտ են ընդունել շատ եգիպտացիներ, որոնց կարծիքով Իսրայելը այս դեպքը օգտագործում է հետամուտ լինելով ամբողջ աշխարհով մեկ անգամ եւս բորբոքելու նացիստական հանցագործությունները: «Սա պարզապես քաղաքական հարց չէ, ասել է գեներալ մայոր Ահմեդ Ֆախրը Կահիրեում Միջին Արեւելքի հետազոտման ազգային կենտրոնի տնօրենը եւ բոլոր երեք պատերազմների վետերանը. սա այն ընտանիքների հարցն է, որոնց ասել են, թե իրենց զավակները անհետ կորել են պատերազմական գործողությունների ժամանակ: Այժմ, 20 տարի հետո, նրանք իմանում են, որ իրենց հարազատներին սառնասրտորեն կրակելով կոտորել են իսրայելցիները»: Եզրափակելով, Ֆախրը ասել է. «Իսրայելցիներն են սկսել այս գործը, իրենք էլ պիտի վերջացնեն: Իսկ խաղաղությունը ենթադրում է արդարություն»: TIME

ԲՈՍՆԻԱ

Մահմեդա-խորվաթական թշնամությունը կարգավորման գլխավոր խոչընդոտ

Բոսնիայում ՄԱԿ-ի արագ հակազդեցության ուժերի Ալֆա ստորաբաժանման հրամանատար Ջեֆ Կուկը, որը բրիտանական գնդապետ է, երկուշաբթի օրը եղել է Սարաեւոյից արեւմուտք գտնվող Ջենիցա քաղաքում: Այնտեղ նա հանդիպել է սերբական հրամանատարների հետ: Սերբերը հաստատել են, որ իրենք համաձայն են համաշխարհային հանրության կողմից առաջարկված հաշտության ծրագրի հետ, ըստ որի սերբերը պետք է ստանան Բոսնիայի տարածքի 49 տոկոսը, սակայն նրանք զգուշացրել են, որ մահմեդականներն ու խորվաթները կռվելու են մնացած 51 տոկոսի համար, երբ գա այդ տարածքը կիսելու ժամանակը: Գնդապետ Կուկը, որի անկողմնակալությանը չի կարելի կասկածել, քանի որ անցյալ ամիս հենց նրա ստորաբաժանումն էր գնդակոծել սերբերի դիրքերը, հաստատել է, որ խորվաթների եւ մահմեդականների միջեւ լարվածությունը աճում է: Նա ասել է, որ Բոսնիայով իր ուղեւորության ժամանակ տեսել է, որ լարվածությունը նրանց միջեւ աճում է ինչպես ամենացածր, այնպես էլ ամենաբարձր քաղաքական եւ զինվորական մակարդակներում: Ըստ որում դա տեղի է ունենում այնպիսի իրավիճակում, երբ մոտերքում չկան ՄԱԿ-ի խաղաղապահ ուժերի ներկայացուցիչները, որոնք կարող էին արձանագրել ծնունդ առնող բախումը եւ ազդել իրադրության վրա: Նա հայտնել է, որ Ջենիցայում եւ ուրիշ վայրերում սերբերի եւ խորվաթների հարաբերությունները բավականին բարեկամական են: ՄԱԿ-ի եւ ՆԱՏՕ-ի տեսաբանները չէին կարող հաշվի առնել, որ խաղաղ կարգավորման կայացման գլխավոր վտանգը ոչ թե սերբերը կարող են լինել, այլ մահմեդա-խորվաթական թշնամությունը:

ԳՐԻԳՈՐ ԷՄԻՆ-ՏԵՐՅԱՆ

ԹՈՒՐՔԻԱ

Կառավարության եւ Թուրք-իշի միջեւ համաձայնություն կայացավ

Թուրք-իշի (Թուրքիայի աշխատանքի համընդհանուր կոնֆեդերացիա) եւ կառավարության միջեւ կոլեկտիվ աշխատանքային պայմանագիր ստորագրելու կապակցությամբ 10 ամիս շարունակվող բազմաթիվ հանդիպումներն ու երկարատեւ բանակցությունները վերջապես դրականորեն ավարտվեցին: Ինչպես հաղորդում է թուրքական հեռուստատեսությունը, վարչապետ Թանսու Չիլլերի եւ Թուրք-իշի նախագահ Բայրամ Մերալի միջեւ հոկտեմբերի 26-ին տեղի ունեցած եզրափակիչ հանդիպման ընթացքում կողմերը գոհունակությամբ ստորագրեցին այդքան երկար սպասված պայմանագիրը: Վերջին մեկ ամսվա ընթացքում երկիրը ցնցող գործադուլներն իրենց թափով աննախադեպ էին: Պետությունը ֆինանսական ու բարոյական ծանր կորուստներ կրեց: Համընդհանուր գործադուլը բացասական ազդեցություն ունեցավ երկրի ներքաղաքական իրավիճակի վրա: Ինչպես նշում են քաղաքական դիտորդները, երկրում շարունակվող կառավարական ճգնաժամի հիմնական պատճառներից մեկը համարվում է գործադուլը: Պայմանագրի ստորագրումից հետո 52-րդ կառավարության կազմավորման հարցում այլեւս որեւէ լուրջ խոչընդոտ չի լինի: Թուրք-իշի աջակցությունը Չիլլերին տալիս է գործողությունների լայն հնարավորություն:

Պայմանագրի ստորագրման արարողությունից հետո տեղի ունեցավ համատեղ մամլո ասուլիս, ուր լրագրողների հարցերին պատասխանեցին վարչապետ Թ. Չիլլերը եւ Թուրք-իշի նախագահ Բ. Մերալը: Չիլլերը հայտարարեց, որ 1996 թ. առաջին կիսամյակում միջին աշխատավարձը կաճի 16, իսկ 2-րդ կիսամյակում կրկին 16 տոկոսով: 1997 թ. առաջին կիսամյակին միջին աշխատավարձը կաճի եւս 16, իսկ 2-րդ կիսամյակին՝ 18 տոկոսով: Այս տարվա նոյեմբերի 15-ից սկսած ծառայողների աշխատավարձը կաճի 55 տոկոսով, իսկ նախկին ծառայող թոշակառուներին տրվող նպաստը կաճի 53 տոկոսով: Չիլլերն ասաց, որ պայմանագիրը ստորագրելիս ղեկավարվել է բարձր աշխատավարձ ստացողներին՝ քիչ, իսկ ցածր ստացողներին՝ շատ սկզբունքով: Վերջում Չիլլերը հայտարարեց. «Կոլեկտիվ աշխատանքային պայմանագրի ստորագրումը բավականին երկարաձգվեց: Դրա հիմնական պատճառը խնդրին համապարփակ մոտեցումն էր: Բայց ինչպես ասում են՝ «ուշ լինի, նուշ լինի»: Կարեւորն այն է, որ արդյունքը բոլորի համար գոհացուցիչ է: Ինչպես հայտնի է, խնդրի լուծման հարցում զգալի դրական դեր խաղաց վերջերս մեր կողմից ստեղծված կառավարությանն առընթեր սոցիալ տնտեսական խորհուրդը: Ես պետք է ուրախությամբ նշեմ, որ վերջին մեկ ամսվա ընթացքում հաղթահարվել է նաեւ տնտեսական ճգնաժամը: Լուծվել է կասպիական նավթը Թուրքիայի տարածքով միջազգային շուկա դուրս բերելու կենսական խնդիրը: Շատ շուտով կլուծվի նաեւ Եվրոպայի մաքսային ընդհանուր պայմանագրին Թուրքիայի անդամագրվելու երկար սպասված խնդիրը: Այս բոլորը խոշոր ձեռքբերումներ են, որոնց արժեքը դժվար է գերագնահատել: Այժմ մեզ մնում է հաղթահարել կառավարական ճգնաժամը, կազմել 52-րդ կառավարությունը եւ արագ թափով առաջ ընթանալ», վերջում ասաց Թ. Չիլլերը: Թուրք-իշի նախագահ Բ. Մերալը, պատասխանելով լրագրողների հարցերին, ասաց. «Կոլեկտիվ աշխատանքային պայմանագրի ստորագրումը երկար ձգձգվեց, բայց արդյունքը գոհացուցիչ է: Վաղվանից աշխատողները կզբաղեցնեն իրենց աշխատատեղերը»:

ԳՐԻԳՈՐ ՉԱՐՔՉՅԱՆ

Ալիեւը Ստամբուլում առանձնացրեց Քլինթոնի եւ Տեր-Պետրոսյանի հետ ունեցած հանդիպումները

26 ՀՈԿՏԵՄԲԵՐ, TRT: ՄԱԿ-ի 50-ամյակին նվիրված հոբելյանական հավաքի նիստերին մասնակցելուց հետո հայրենիք վերադարձի ճանապարհին Ստամբուլ ժամանեց Ադրբեջանի Հանրապետության նախագահ Հեյդար Ալիեւը: Ալիեւն օդանավակայանում պատասխանելով լրագրողների հարցերին ասաց. «Նյու Յորքում կայացան մի շարք երկկողմ հանդիպումներ: Հատկանշական են հանդիպումները ԱՄՆ-ի նախագահ Բիլ Քլինթոնի եւ Հայաստանի Հանրապետության նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանի հետ: Քլինթոնի հետ հանդիպման ընթացքում վերջինս գոհունակությամբ նշեց ադրբեջանական նավթը Թուրքիայի տարածքով միջազգային շուկա դուրս բերելու մեր առաջարկը: Ինչպես հայտնի է, մեր շնորհիվ կասպիական նավթի բաշխման հարցում Թուրքիայի չափաբաժինը զգալիորեն մեծացավ»:

Այնուհետեւ Ալիեւն ասաց. «Լեւոն Տեր-Պետրոսյանի հետ հանդիպման եւ առանձնազրույցի ընթացքում քննարկեցինք Ադրբեջան-Հայաստան հակամարտության եւ Լեռնային Ղարաբաղի խնդիրները: Ես մեկ անգամ եւս ընդգծեցի Ադրբեջանի գրավյալ տարածքներից հայկական ուժերի անվերապահ դուրսբերման անհրաժեշտությունը»:

Նույն օրը Ալիեւը վերադարձավ Բաքու:

Ռոբերտ Լուկասը ստիպված է բավարարվել Նոբելյան մրցանակի կեսով. կինը գերազանցեց տնտեսագետին

Այս տարվա տնտեսագիտության գծով Նոբելյան մրցանակակիրը Ռոբերտ Լուկասն է՝ Չիկագոյի համալսարանից: Սակայն 1 միլիոն դոլլար կազմող դրամական պարգեւը նա ստիպված կլինի կիսել իր նախկին կնոջ՝ Ռիտայի հետ, որը 1989 թվականին շրջահայացորեն պնդել էր, որ ամուսնալուծության վկայականում մի կետ մտցվի, ըստ որի Նոբելյան մրցանակի կեսը պետք է հանձնվի նախկին կնոջը, եթե Ռոբերտ Լուկասն այդ պատվին արժանանա մինչեւ 1995 թվականի հոկտեմբերի 31-ը: Չնայած Ռոբերտ Լուկասը տնտեսագիտության մեջ հանճար է, սակայն նախկին կինը 6 տարի առաջ գերազանցել է նրան: Ռիտա Լուկասը հաշվի էր առել այն հանգամանքը, որ Չիկագոյի համալսարանի 8 պրոֆեսորներ նախկինում արդեն արժանացել են տնտեսագիտության գծով Նոբելյան մրցանակների: Ռոբերտ Լուկասի 70-ական թվականների նորարարական աշխատությունները այժմ տնտեսագիտության տեսության հիմքերից են: Երբ Լուկասն ստեղծում էր ռացիոնալ սպասումների իր տեսությունը, որը ցուցադրում է, թե սպառողների վարքը ինչպես կարող է խափանել երկրի տնտեսությունը ղեկավարելու կառավարության փորձերը, դժվար թե գլխի էր ընկնում, թե մի օր կզրկվի կես միլիոն դոլլարից: Սակայն, «Պայմանը պայման է», ասել է Նոբելյան մրցանակակիրը: Նրա համար ամենացավալին այն էր, որ եթե Նոբելյան մրցանակի արժանանալու մասին հաղորդագրությունը լիներ ոչ թե հոկտեմբերի 10-ին, այլ 22 օր հետո, Ռիտա Լուկասը ոչ մի սենթ էլ չէր ստանա, քանի որ պայմանագրի ժամկետն արդեն լրացած կլիներ:

Գ. Է.-Տ.

ՎԱՃԱՌՎՈՒՄ Է
4 սենյականոց բնակարան (95քմ),
վերնահարկով (45քմ) Աջափնյակում (Հանրապետական հիվանդանոցի մոտ), 4 հարկանի քարե շենքում: Ընդհանուր մակերեսը 140 քմ:
Զանգահարել՝ 342586 կամ 581841:

Մշակույթ

Մարինե Պեստրոյանի պոեզիան ներկայացվեց ֆրանսիացիներին

Երիտասարդ բանաստեղծուհի Մարինե Պեստրոյանը ծանոթ անուն է արդեն ոչ միայն Հայաստանում. 1995-ին ֆրանսիական Comp'Act հրատարակչությունը Վահե Գոդելի թարգմանությամբ եւ նախաբանով լույս ընծայեց Մարինեի «Գնամ քարեր բերեմ» բանաստեղծությունների 68 էջ կազմող գիրքը: Իսկ սեպտեմբերի 22-ին Le Monde-ի գրական հավելվածը տպագրեց Պատրիկ Քեշիշյանի «Փշածաղիկ» վերնագրով հոդվածը բանաստեղծուհու ֆրանսերեն թարգմանված վերոհիշյալ գրքի մասին: Վահե Գոդելի նախաբանը գրական շրջանակների համար լայնհորիզոն, ֆրանսիական մամուլի արձագանքը հետաքրքիր գտնելով, հարմար գտանք դրանք ստորեւ ներկայացնել ամբողջությամբ:

Ճիշտ քառորդ դար առաջ ինձ համար հայտնագործեցի Երեւանը՝ խորհրդային այդ մայրաքաղաքը, որը ծնունդ է առել գավառական մի ավանից, Էրեբունի թագավորական [illegible] քաղաքի մնացորդների մոտերում: Ես այնտեղ վերադարձա երկու անգամ. նախ՝ 70-ականների սկզբներին, ապա մի երկրորդ բազմամյա այցելություն կատարեցի, որի ընթացքում կարողացա ընթերցել տալ Բոդլերի եւ Ռեմբոյի բանաստեղծությունները համալսարանի ֆրանսիական բաժնում, այցելել որոշ թվով նկարիչների ու բանաստեղծների, որոնց բրեժնեւյան վարչակարգը քողարկված կերպով դատապարտել էր յուրօրինակ ներքին արգելափակման, ինչպես նաեւ մուտք գործեցի «Գարուն» հանդեսի շրջանակ, որը խորամանկություն ու խիզախությունը զուգորդելով ջանում էր պահպանել գրականության պատիվը եւ հպարտ լինելով իր անվանումից, ջանադրաբար հարթում էր նորի ճանապարհը... Բազմաթիվ սրբատեղիների հոյակերտությունից հմայված Արտաշես Հունանյանը նկարում էր Գրիգոր Նարեկացուն փառաբանող աղոթքներ ու ողբեր: Հակոբ Հակոբյանի հրաշագործ վրձինի տակ ծնունդ էր առնում սոցիալիստական ռեալիզմի մի հոյակապ այլակերպում. արնաքամ, մերկ Հայաստանն զարմանալիորեն արտացոլում էր Բեկետի կամ Կաֆկայի աշխարհը: Այն անհնազանդությունը, որով խիզախ Պարույր Սեւակը ղեկավարվել էր մինչեւ 1971-ին «վթարից» տեղի ունեցած իր մահը, լիցքավորում էր հետպատերազմյան տարիների նոր սերնդի բազմաթիվ բանաստեղծների՝ Հենրիկ Էդոյանին (որը կլանված կարդում էր ժամանակակից գեղագիտության հիմնադիրների գործերը), Հովհաննես Գրիգորյանին (որը բացահայտեց Գինզբերգին եւ միաժամանակ հմայված էր լատինաամերիկյան պոեզիայով), Արտեմ Հարությունյանին, որը դոկտորական թեզ էր գրում Ջոյսի վերաբերյալ, բայց դեռեւս չէին համարձակվում բարձրաձայն խոսել Սլավիկ Չիլոյանի, խուլիգանների արքայի, Վիյոնի ժառանգորդի, Վիանի աշակերտի մասին (որի գործերից նա թարգմանել էր «Դասալիքը», «Բանտարկյալը», «Վերջին վալսը» եւ «Գարուն» ամսագրում 1968-ին լույս տեսած մի քանի այլ բանաստեղծություններ): Չէին խոսում անարխիստ Չիլոյանի, հավերժական կլոշարի մասին, որը մահացավ գերյալ վիճակում, 35 տարեկանում: Պաշտոնական արվեստի պաշտպաններն ու լրատվամիջոցները շարունակում էին իրենց վտանգավոր չարիքներ համարելով «կոսմոպոլիտիզմը» եւ մանավանդ ստեղծագործության ազատությունը. վարչակարգի ճեղքված պատյանը դեռ դիմանում էր:

Հայաստան վերադարձա 10 տարի անց՝ 1983-ի ամռանը: Նկատելի փոփոխություններ էին տեղի ունեցել. անհարգալից երիտասարդություն, բացախոսություն, Աֆղանստանի «կեղտոտ պատերազմի» ծնած հակապատերազմական տրամադրություններ, Անդրոպով... Բայց ով կարող էր կանխատեսել արդեն 1986-ից (Չեռնոբիլ) իրար հաջորդելիք հեղաշրջումները: Բավականաչափ շրջեցի այդ մի քանի շաբաթների ընթացքում: Եղա Սպիտակի լեռնային շրջանում (որը 1988-ի դեկտեմբերի 7-ին դարձավ հայոց պատմության ամենադաժան երկրաշարժերից մեկի էպիկենտրոնը), Թբիլիսիում (նախկին Թիֆլիսը, որտեղ ժամանակին ապրել էր մեծ Սայաթ Նովան, եւ որտեղ ես գտա ոչ այնքան պերճանք, որքան չափավոր կարգ ու կանոն, զգայական գեղեցկություն, անդորր, որը խախտում էին միայն ամեն տեսակ մեղկություններով լի ջերմ գիշերները): Այցելեցի Սեւանա լճի արեւելյան մաս, անցա Եղեգնաձորի ոսկեզօծ այգիների եւ Զանգեզուրի բնական ամրությունների միջով մինչեւ Գորիս, որը շատ մոտ է Ղարաբաղին («Շվեյցարիայի պես գեղեցիկ», ասացին ինձ, եւ որը դառնալու էր արյունալի միջնատարածք): Կրկին տեսա իմ հին բարեկամներ Էդոյանին, Գրիգորյանին, Հարությունյանին, անխոնջ Ալեքսանդր Թոփչյանին, որոնց մազերը մի քիչ նոսրացել էին, իսկ կնճիռները ավելացել: Իրավիճակն աստիճանաբար փոխվում էր նրանց օգտին. սկսել էին թարգմանել Ռեմբո եւ հույս ունեին հրատարակել Չիլոյանի Հայաստանի առավել անիծյալ բանաստեղծի գործերը: Բանասիրականի նոր շրջանավարտ Հակոբ Մովսեսը, որը Ռիլկե էր թարգմանում, անշուշտ չէր պատկերացնում, որ մեկ տասնամյակ անց դառնալու է անկախ հանրապետության մշակույթի նախարար: Ամենաերիտասարդը՝ Վիոլետ Գրիգորյանը, այսօր, իմ կարծիքով (Մարինե Պեստրոյանի հետ, երկուսն էլ ծնվել են 60-ականներին) հայ պոեզիայի առավել վստահելի հույսն է: Որոշ ժամանակ անց պատերազմ սկսվեց: Ողբերգական իրավիճակ Ղարաբաղում: Շրջափակում: Մեծ թշվառություն: Եւ այդուհանդերձ Հովհաննես Գրիգորյանը լույս ընծայեց «Հրեշտակներ մանկության երկնքից», Հակոբ Մովսեսը «Գիրք ծաղկման», առավել ըմբոստ դարձած Վիոլետ Գրիգորյանը, որը երդվել էր «այլեւս երբեք բանաստեղծություն չգրել», գրեց «Ճշմարիտ, ճշմարիտ եմ ասում», մինչդեռ Մարինե Պեստրոյանը շարունակում էր գրել փոքրիկ «կոշտ» բանաստեղծություններ, որոնք քննադատական էին եւ, միաժամանակ, հազվագյուտ մեղեդային, ասես փոքրիկ աղոթքներ, լուռ ճիչեր լինեին: Մարինեն սկսել էր հավաքել իր քարերը. կայծքար, գլաքար, տուֆի ու բազալտի հնամյա մնացորդներ, բյուրեղյա երազի փշրանքներ, հիանալի հիշողության հատվածներ խճանկարի ձեւով... Եւ այդ ամենը ինչպես բառացի, այնպես էլ գրական իմաստով հայտնագործում էր այն, ինչը Մորիս Բլանշոյի բնութագրմամբ կոչվում է «աղետի ձեռագիր»:



Mariné Pétrossian

J'apporterai des pierres

Éditions Comp'Act

ՎԱՀԵ ԳՈԴԵԼ
Հունվար, 1994

Պոեզիա. «Փշածաղիկ»

Ավելի ձանձրալի բան չկա, քան այն պոեզիան, որը բացահայտորեն աղերսվում է թեկուզ ողբերգական մի իրադարձության, ժամանակի եւ տարածության մեջ սահմանափակված որեւէ հանգամանքի հետ: Սա չի նշանակում, թե իրադարձությունը պետք է բացակա լինի լավ բանաստեղծությունից: Հայաստանը բնավ բացակա չէ, այդքան ցնցված այդ երկրի դրամաները ու հույսերը բնավ չեն համրանում, երբ Մարինե Պեստրոյանը, որը ծնվել է 1960-ին Երեւանում եւ ապրում է այնտեղ, գրում է, օրինակ.

Ես համր եմ ծնվել,
Ես ծնվել եմ հին կիրակիներին:

կամ

Մենք կղզի էինք փնտրում անանուն ջրերում,
Գտանք կղզի, որովհետեւ ափը
Չէր երեւում:

Դրանք պարզապես փոխադրվել, թարգմանվել են բանաստեղծության հայտնագործած լեզվի:

Ուզում եմ տողերս
Օրորվեն հովում
Որպես փշածաղիկ:

Մարինե Պեստրոյանի պոեզիան աչքի է ընկնում սեղմ ու հակիրճ ոճով, հուզական է՝ առանց լացակումած լինելու, երբեք չի հայտնվում ազգայնական ոգու շատ տրորված կածաններում եւ պարզապես վերարտադրում է համառ ու ցավագին մի հուշ, ժամանակից խամրած գույնի պայծառությունը, [illegible] կամ գինու, հացի եւ ջրի բույրը, հնօրյա պատրաստված մի սեղանի եւ նրա բիկնոցի փոշին...

Ամեն ինչ հին է՝ ծովը, երկինքը
Եւ արեւն է հին:
Ծաղիկն է նորը:
Ծաղիկն է նորը, ծնվում է այնտեղ,
Որ միայն լույս է ու միայն քարի:

ՊԱՏՐԻԿ ՔԵՇԻՇՅԱՆ

Միհրանյանն առաջին անգամ «Դիմակահանդեսում»

ԵՐԵՎԱՆ, 27 ՀՈԿՏԵՄԲԵՐ, ՍՆԱՐՔ: Սպենդիարյան օպերայի եւ բալետի ակադեմիական թատրոնում այսօր ներկայացվեց Արամ Խաչատրյանի «Դիմակահանդես» հայտնի բալետը: Հայաստանի ժողովրդական արտիստ Հ. Դիվանյանի (Արբենին) եւ վաստակավոր արտիստուհի Ն. Դավթյանի (բարոնուհի Շտրալ) հետ մեկտեղ գլխավոր հերոսուհի Նինայի դերում առաջին անգամ հանդես եկավ բալետի երիտասարդ պարուհի Մարինե Միհրանյանը:

Թատրոնի գլխավոր բալետմայստեր, Հայաստանի ժողովրդական արտիստ Վիլեն Գալստյանն ասաց. «Մեր խաղացանկի կարեւոր բեմադրություններից մեկն է «Դիմակահանդեսը»: Մարինե Միհրանյանն իրեն արդեն լավ է դրսեւորել «Ձյունե թագուհին» բալետում՝ կատարելով Գերդայի դերը: Ուստի «Դիմակահանդեսում» նրան հանձնարարեցինք գլխավոր հերոսուհու դերը: Ուրախ եմ, որ նա հաջողությամբ հաղթահարել է մասնագիտական խնդիրը: Այդ դերում նրա դեբյուտը կարելի է հաջողված համարել»: ■

ԱԶԴԱԳԻՐ

Պարոնյան թատրոն

Այսօր երաժշտական կոմեդիայի թատրոնում հանդիսատեսը կարող է դիտել Ցագարելիի «Խանումի արարքները», իսկ վաղը՝ Գոգոլի «Ամուսնությունը»: Ներկայացումների սկիզբը՝ ժամը 16-ին:

Համազգային թատրոն

Այսօր թատրոնը կներկայացնի Վ. Սարոյանի «Մի գավաթ բարություն» պիեսը, վաղը՝ Հ. Յակոբյանի «Լեռնային կակաչները»: Սկիզբը՝ ժամը 16-ին:

Մետրո թատրոն

Վաղը՝ ժամը 17-ին, թատրոնի բեմում հանդիսատեսը կարող է դիտել Ա. Ադասարյանի «Ուիլի, Թիփի, Չիգ, եւ երեքն էլ մի աղջիկ» պիեսը: Իսկ ջազի երկրպագուներին հաճելի անակնկալ է սպասում: Թատրոնի բարում ներկայացումից մեկ ժամ առաջ, նաեւ՝ հետո, դաշնամուր կնվագի Լեւոն Մալխասյանը:

ԹԱՏՐՈՆ

Աբելյան թատրոնի հյուրախաղերը՝ նոյեմբերի 11-ից 18-ը

Ըստ «Ազգի» նախորդ շաբաթ հաղորդած լուրի, Աբելյան թատրոնի հյուրախաղերը սպասվում են նոյեմբերի 4–11-ը, սակայն տեղեկացանք, որ դերասաններից մեկի հիվանդության պատճառով հետաձգվում են:

Հայաստանի մշակույթի նախարարությունը եւ Վանաձորի Աբելյան պետական դրամատիկական թատրոնը հրավիրում են Երեւանի Պարոնյան երաժշտական կոմեդիայի պետական թատրոն, դիտելու թատրոնի հյուրախաղերը՝ նվիրված հայ մեծ դերասան Հովհաննես Աբելյանի ծննդյան 130-ամյակին: Խաղացանկում նոյեմբերի 11-ից 18-ը կարող եք դիտել.

Նոյեմբերի 11, 15-ին՝ Անտոն Չեխովի «Երեք քույր» դրաման
12, 16-ին՝ Մուրացանի «Ռուզան» պատմական դրաման
13, 17-ին՝ Վ. Շեքսպիրի «Ռիչարդ երկրորդ» ողբերգությունը
14, 18-ին՝ Ա. Օստրովսկու «Անմեղ մեղավորներ» դրաման:

Ներկայացումների սկիզբը ժամը 16.00-ին: Տոմսերը վաճառվում են Հ. Պարոնյան թատրոնի տոմսարկղում:

Աբելյան թատրոնի գեղարվեստական ղեկավար, արվեստի վաստակավոր գործիչ Վահե Շահվերդյան

ՀԱՄԱՌՈՏ

Բարի լույս, «Նավասարդ XI»

Ընթերցասերներին բարի լույս մաղթեց եւս մի պարբերական՝ «Մարզաշխարհ» թերթի հավելված «Նավասարդ XI»-ը: Մեր ձեռքին է առաջին համարը, որ շնչում է թարմությամբ, նյութերի բազմազանությամբ, գրավիչ ձեւավորումով: Մի խոսքով, ինչպես երաշխավորում են նավասարդցիները, «կարդացողի գլուխը չի ցավի»: Լայն է թերթի հետաքրքրությունների շրջանակը. բազմաբնույթ տեղեկատվություն, լուրեր, փաստեր, մշակութային կյանք՝ գրականություն, արվեստ, սպորտ: Մուտքը խոստումնալից է: Շնորհավորենք «Նավասարդ XI»-ի մեր գործընկերներին եւ մաղթենք հաջողություններ:

Կլոդ Մութաֆյանի ֆիլմը՝ կիպրական հեռուստատեսությամբ

Ֆրանսահայ գիտնական եւ մշակութային գործիչ Կլոդ Մութաֆյանի «Հայաստանի վերջին թագավորները» ֆիլմը երեկ, ուրբաթ, ցուցադրվել է Կիպրոսի «Սայփրըս բրոդկաստինգ» պետական հեռուստատեսությամբ: Ֆիլմը, ինչպես հայտնի է մեր ընթերցողներին, ներկայացնում է Կիլիկիայի հայկական թագավորության վերջին Լուսինյան թագավորներին, Միջերկրականի շրջակա երկրների, այդ թվում Կիպրոսի հետ նրանց առնչակցությունները եւ, ի վերջո, Ֆրանսիայում վախճանված Լեւոն 6-րդին:

Եւս մեկ «հայտնաբերված» հայ

Օրերս «Ազգը» տեղեկացրեց, թե Սալվադորե Ադամոն Լոս Անջելեսում կերգի հայերեն: Մինչ լոսանջելեսցիք անհամբեր կսպասեն հանրահայտ երգչի հայերեն ունկնդրությանը, հոկտեմբերի 25-ին երեւանցիներն առիթ ունեցան լսելու մեկ ուրիշ հայերեն կատարում՝ այս անգամ Ֆիլիպ Կիրկորովի... հոր կատարմամբ: Ալլա Պուգաչովայի եւ Ֆիլիպ Կիրկորովի համերգի ընթացքում Պետրոս Կիրկորովը երգեց երկու հայկական երգ: Իհարկե, պ. Կիրկորովը հանրահռչակ չէ, ինչպես Սալվատորե Ադամոն, այլ ընդամենը հանրահռչակ երգչուհու սկեսրայրն է, բայց խոստովանենք, որ այս փաստը շոյել է բազմաթիվ երեւանցիների ազգային ինքնասիրությունը, իսկ «հայտնաբերված» հայերի ցուցակն ավելացավ եւս մեկ անունով:

Հ. Մ.



ՀԵՏԱՁԳՎՈՒՄ Է
TOTO-ի ցուցահանդեսը

Նախատեսված վայրում անակնկալ խաչաձեւման հետեւանքով հետաձգվում է TOTO-ի ցուցահանդեսը, որը կայանալու էր հոկտեմբերի 28-ին, Կամերային թատրոնում: Ցուցահանդեսի նոր վայրն ու օրը կհայտարարվեն առաջիկա շաբաթ: «Ազգի» երգիծանկարիչ TOTO-ի գործերի ցուցահանդեսի այս ակամա հետաձգման համար հայցում ենք արվեստասերների ներողամտությունը:

«Ազգի» խմբագրություն

ՀՀ ՖԵԴԵՐԱՑԻԱ

Ֆուտբոլային նոր պատիժներ

Այս օրերին շատ է խոսվում ու գրվում ֆուտբոլային դաշտերում տեղի ունեցող ծեծկռտուքների եւ այլ արտառոց երեւույթների մասին: «Շիրակ»-«Արարատ», «Նշվարդ»-«Արաբկիր» հանդիպումների ժամանակ խաղադաշտը ռինգի վերածած անկարգապահ ֆուտբոլիստները խիստ տույժի են ենթարկվել, ինչը, սակայն, ինչպես երեւում է, դաս չի դարձել մյուսներին:

Ամեն գնով միավոր շահելու մտահոգությամբ առանձին թիմերի մարզիչներ միանգամայն աչքաթող են արել այնպիսի կարեւոր գործոն, ինչպիսին ֆուտբոլիստների դաստիարակությունն է: Դրա վառ հետեւանքն է, օրինակ, այն խուլիգանական միջադեպը, որը տեղի ունեցավ հանրապետական մասնագիտացված դպրոցի դաշտում, որտեղ մրցեցին Հայաստանի առաջին խմբի առաջնության մասնակիցները՝ Երեւանի ԲԿՄԱ-ն եւ Վանաձորի «Լոռին»: «Խաղն անցավ նորմալ, եւ մրցավարությունն էլ «լավից» բարձր եմ գնահատել», Նոյյան տապան գործակալության աշխատակցին իրավիճակը պարզաբանեց հանդիպման փորձառու տեսուչ Ալեքսեյ Բալայանը: Իսկ ահա բանակայինների թիմի ղեկավարները «պահանջելով» 11 մետրանոց եւ չհասնելով իրենց նպատակին, խաղից հետո հաշվեհարդար տեսան գլխավոր մրցավար Սերգեյ Սարգսյանի (Հոկտեմբերյան) եւ եզրային մրցավար Հովհաննես Խաչատրյանի հետ: Ընդ որում մրցավարի վրա առաջինը «գրոհեց» թիմի պետ Ռոբերտ Սարիբեկյանը, ապա նրա օրինակին հետեւեցին մի խումբ սանձարձակ ֆուտբոլիստներ, դաշտ ներխուժեցին նաեւ անկարգապահ հանդիսատեսներ: Դժվար է ասել, ինչ կլիներ մրցավարների հետ, եթե օգնության չհասնեին ոստիկանները...

Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիայի կարգապահական հանձնաժողովը սկզբունքային մոտեցում ցուցաբերեց տեղի ունեցածի նկատմամբ, արձանագրելով, որ հեռանկարային համարվող ԲԿՄԱ թիմում բարձիթողի վիճակում է ֆուտբոլիստների կարգապահությունը: Կոմիտեն խիստ նկատողություն հայտարարեց թիմի պետ Ռ. Սարիբեկյանին եւ որոշեց միջնորդությամբ դիմել ՀՀ պաշտպանության նախարարությանը, ոչ նպատակահարմար գտնելով թիմի մեջ պատասխանատու պաշտոնում նրա գտնվելը: Առավել «աչքի ընկած» ֆուտբոլիստներ Վարդան Խոսյանը եւ Սարգիս Նորիկյանը որակազրկվեցին մեկ տարով: Ակումբը տուգանվել է 200 հազար դրամով: Հինգ խաղ ստիպված կլինի բաց թողնել թիմի ավագ Եղիշե Թադեւոսյանը, նրա «ակտիվությունը» գնահատվել է 50 հազար դրամ:

Մինչեւ 1995-96 թթ. մրցաշարի ավարտը որակազրկվել է եւ «Մալաթիա» մարզադաշտը: Առաջարկվել է կտրուկ միջոցներ ձեռնարկել այս մրցաշարում պատշաճ պայմաններ ստեղծելու, մրցումները բնականոն անցկացնելու համար:

ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ

ՉԵՄՊԻՈՆՆԵՐԻ ԳԱՎԱԹ

Եվրոպայի բասկետբոլային հսկան պարտվեց

Սկսվել են բասկետբոլի տղամարդկանց եւ կանանց եվրոպական ակումբային մրցաշարերը: Տղամարդկանց չեմպիոնների գավաթի խաղարկության մեկնարկային խաղում նույնանուն նախորդ մրցաշարի հաղթող Մադրիդի «Ռեալը», որի կազմում հանդես է գալիս Վիլնյուսի «Ժալգիրիսի» եւ նախկին ԽՍՀՄ հավաքականի հանրահայտ կենտրոնական Արվիդաս Սաբոնիսը, 52-54 հաշվով զիջեց Հունաստանի «Պանաթինաիկոս» թիմին: Ավելորդ չէ նշել, որ Արվիդաս Սաբոնիսն անցյալ տարի ճանաչվել էր Եվրոպայի լավագույն բասկետբոլիստ: Հունական թիմի հաջողությունն ամենեւին պատահական չէ, քանի որ Հունաստանում բասկետբոլը մեծ վերելք է ապրում, եւ թիմերը, հարստանալով, հրավիրում են առաջին կարգի բասկետբոլային աստղերի: «Պանաթինաիկոսն» ու «Ռեալն» ընդգրկված են նախնական փուլի «Բ» խմբում: «Ա» խմբում ընդգրկված Մոսկվայի ԲԿՄԱ-ն հյուրընկալվելիս Լեւերկուզենում 93-85 հաշվով հաղթեց տեղի «Բայերին» (Գերմանիա): Իսկ կանանց Մոսկվայի ԲԿՄԱ թիմը անհաջող սկսեց կանանց չեմպիոնների գավաթի խաղարկության մրցաշարը եւ 68-80 հաշվով զիջեց Իսպանիայի «Կոստա Նարանյա» թիմին: ■

ՖՈՒՏԲՈԼ

Մրցանակակիրները պահպանեցին արժանապատվությունը

Ռուսաստանի ֆուտբոլի բարձրագույն խմբի առաջնությունը հասավ վերջնագիծը: Դեռեւս նախավերջին տուրում հայտնի դարձան բոլոր մրցանակակիրները, ուստի եզրափակիչ տուրում մարզական առումով ոչինչ չունենալով, այնուամենայնիվ արժանապատիվ ձեւով հանդես եկան: Չեմպիոնը՝ Վլադիկավկազի «Սպարտակ-Ալանիան» սեփական հարկի տակ ոչ-ոքի 0-0 հաշվով ավարտեց հանդիպումը «Կամազի» հետ: Երկրորդ մրցանակակիրը՝ Մոսկվայի «Լոկոմոտիվը» ուժերը չափեց Մոսկվայի «Դինամոյի» հետ, որը 10 անընդմեջ հաղթանակ էր տարել (հաշվի առնելով նաեւ Գավաթակիրների գավաթի խաղարկությունը) եւ պայքարում էր 4-րդ տեղի համար: Խաղն ավարտվեց ոչ-ոքի 1-1: «Դինամոն» այնուամենայնիվ զբաղեցրեց 4-րդ տեղը, քանի որ նույն տեղին հավակնող Մոսկվայի «Տորպեդոն» 1-2 հաշվով զիջեց ԲԿՄԱ-ին: «Տորպեդոն» բավարարվեց 5-րդ տեղով, սակայն նույնպես իրավունք ստացավ գալիք տարի մասնակցել ՈՒԵՖԱ-ի գավաթի խաղարկությանը: Ռուսաստանի նախկին չեմպիոն Մոսկվայի «Սպարտակը», որն առաջնությունն ավարտել է 3-րդ տեղում, վերջին տուրում 4-2 հաշվով հաղթեց Կամիշինի «Տեքստիլշչիկին»: ■

Առաջին շրջանն ավարտվեց

UEFA CHAMPIONS LEAGUE

Չեմպիոնների լիգայի խմբային մրցաշարերի առաջին շրջանն ավարտվեց: Վերջին հանդիպումն անցկացրեց A խմբում ընդգրկված Դանիայի «Օլբորգ» թիմը, որը փոխարինել է հայտնի սկանդալի պատճառով ՈՒԵՖԱ-ի կողմից 3 տարով որակազրկված Կիեւի «Դինամոյին»: Վերջինս, ինչպես հայտնի է, առաջին տուրում, սեփական հարկի տակ 1-0 հաշվով հաղթել էր Հունաստանի «Պանաթինաիկոս» թիմին: Այդ արդյունքը չեղյալ հայտարարվեց եւ փոխարենը տեղի ունեցավ «Օլբորգ»-«Պանաթինաիկոս» հանդիպումը: Չնայած հույն ֆուտբոլիստները նախորդ երկու տուրերում հաղթել էին մրցակիցներին եւ գլխավորում էին մրցաշարային աղյուսակը, սակայն այս անգամ դաշտից հեռացան պարտված՝ 1-2 հաշվով:

A խումբ

	Խ	Հ	Ո	Պ	Գ	Մ
1. Պանաթինաիկոս	3	2	0	1	5-3	6
2. Պորտո	3	1	1	1	2-1	4
3. Նանտ	3	1	1	1	4-4	4
4. Օլբորգ	3	1	0	2	3-6	3

«Երեւանի» հերթական հաղթանակը

ՀՀ բարձրագույն խմբի առաջնություն

10-րդ տուր

«Վան»-«Երեւան»	1-3
«Արարատ»-«Արագած»	3-2
«Ղարաբաղ»-«Ցեմենտ»	0-0

Շարունակում է հաճելիորեն զարմացնել Երեւանի նորաստեղծ «Երեւան» թիմը: Հերթական տուրում կրկին դաշտից առանց գոլի չհեռացավ այս թիմի հարձակվող Տիգրան Եսայանը, որը մեկ անգամ գրավելով մրցակցի դարպասը, իր գոլերի թիվը հասցրեց 12-ի եւ ռմբարկուների մրցույթում «Արագածի» հարձակվող Արտակ Ադամյանի հետ բաժանում է 2-3-րդ տեղերը: Վերջինս «Արարատի» հետ խաղում նույնպես դարձավ գոլի հեղինակ: Ռմբարկուների ցուցակը գլխավորում է «Ցեմենտի» հարձակվող Հովհաննես Թոմբարյանը, որը խփել է 14 գնդակ: ■

ԹԵՆԻՍ

Աղասին դուրս մնաց մրցաշարից

Andre Agassi

Գերմանիայի Էսսեն քաղաքում տեղի ունեցող թենիսի միջազգային խոշորագույն մրցաշարի 1/8 եզրափակիչում աշխարհի թիվ 1 թենիսիստ Անդրե Աղասին պարտվեց իր հայրենակից Մալիվայ Վաշինգտոնին (4-6, 1-6, 1-6) եւ թողեց ասպարեզը: Անհաջողության մատնվեց նաեւ աշխարհի 5-րդ թենիսիստը՝ Մայքլ Չանգը, որը զիջեց ընդհանուր դասակարգմամբ 49-րդ տեղում ընթացող Դանիել Վացեկին (Չեխիա): 29-ամյա շվեդ հանրահայտ թենիսիստ Ստեֆան Էդբերգը Էսսենի մրցաշարում Պրոֆեսիոնալ թենիսիստների ասոցիացիայի հովանու տակ կազմակերպված մրցումներում իր 1000-րդ հանդիպումն անցկացրեց: Սակայն 3-րդ փուլում նա զիջեց աշխարհի 2-րդ թենիսիստ Փիթ Սամփրասին: Ասպարեզը թողել է նաեւ ռուսական թենիսի առաջատարը՝ Կաֆելնիկովը, որը զիջեց Ֆրանսիայի ներկայացուցիչ Առնո Բեչին: Էսսենի մրցումներում 3-րդ համարի տակ հայտավորված ավստրիացի Թոմաս Մուստերը հաղթեց ուկրաինացի Անդրեյ Մեդվեդեւին: ■

ՃԱԿԱՏԱԳԻՐ

Ուկրաինացի չեմպիոնի ողբերգական մահը

ԳՐԻԳՈՐ ԱՌԱՔԵԼՅԱՆ

Լիոն, Ֆրանսիա

400 մ արգելավազքի Եվրոպայի չեմպիոն 25-ամյա Օլեգ Տվերդոխլեբը ողբերգաբար զոհվեց Դնեպրոպետրովսկում: Սկզբում այն կարծիքը տարածվեց, թե իբր գիշերով, երբ ոտքով իր մոր տուն էր գնում, [illegible] հարվածեց նրան եւ նա ստացած [illegible] զոհվեց: Բժշկական շտապ օգնությունը, [illegible] վայր հասավ մի քանի րոպե անց, չկարողացավ փրկել Օլեգին: Տվերդոխլեբն անցյալ տարի Հելսինկիում դարձել էր Եվրոպայի չեմպիոն: Այս տարի վնասվածքի պատճառով, ցավոք նա չկարողացավ մասնակցել Գյոթեբորգում կայացած աշխարհի առաջնությանը: Օլեգ Տվերդոխլեբը լրագրողներին հայտարարում էր. «Այստեղ, Դնեպրոպետրովսկում ամբողջ ամիսն աշխատում եմ ընդամենը 15 դոլարով: Այնպես որ ինձ համար Եվրոպայի կամ որեւէ այլ տիտղոս կենսական նշանակություն ունի»: Նա երազում էր Ատլանտայում բացառիկ հաջողության հասնել եւ կյանքն ապահովել: Այսպես, դրամ շահելու մրցավազքի մեջ մտնելով այս տարի Օլեգը մինչեւ աշխարհի առաջնությունը մասնակցեց 30 մրցումների, իր մրցատարածությունում զբաղեցնելով աշխարհում 11-րդ արդյունքը: Նման ծանրաբեռնված ռիթմով [illegible] մասնակցել աշխարհի առաջնությանը: Անցյալ ամռանը Նորվեգիայի [illegible] տեղի ունեցած համաշխարհային օլիմպիադայում Տվերդոխլեբը չկարողացավ մեդալ շահել: Նրա ընտանիքի «պատիվը» փրկել էր կինը՝ Սվետլանան, որը 800 մ վազքատարածությունում դարձավ արծաթե մեդալակիր: Սվետլանան այսօր իր 4-ամյա Անաստասիին փորձում է բացատրել հայրիկի կորուստը: Հետագայում, ինչպես ճշտվեց, Օլեգ Տվերդոխլեբը էլեկտրական հոսանքի զոհ էր դարձել: Իր մոր տանը, հոսանքատար լարը միացնելու ժամանակ, հոսանքը խփել էր նրան: ■

ԽՃԱՆԿԱՐ

Վահանյանը զիջեց Իվանչուկին

Շվեյցարիայում տեղի ունեցող շախմատի միջազգային խոշորագույն մրցաշարի 5-րդ տուրում Ռաֆայել Վահանյանը զիջեց լվովցի գրոսմայստեր Վասիլի Իվանչուկին, որը վաստակելով 3 միավոր, դարձավ առաջատար: Նույնքան միավոր է վաստակել նաեւ Նայջել Շորթը, որը 5-րդ տուրում միավորը կիսեց Կասպարովի հետ: Պրոֆեսիոնալ շախմատիստների ասոցիացիայի վարկածով աշխարհի չեմպիոնն իր բոլոր 5 հանդիպումներն ավարտել է ոչ-ոքի եւ 2,5 միավորով առայժմ 5-րդ տեղում է: Հաջորդ տուրում Կասպարովը մրցելու է Իվանչուկի հետ:

Հայազգի մարզիկը մրցանակակիր

Սամարայում ավարտվեց բռնցքամարտի աշխարհի չեմպիոն եւ Եվրոպայի եռակի չեմպիոն Վ. Շիշովի անվան մրցանակների համառուսական խաղարկությունը: Հեղինակավոր մրցաշարի հաղթողների թվում է նաեւ Ժիգուլեւսկ քաղաքի ներկայացուցիչ, հայազգի մարզիկ Ի. Ծառոյանը (63,5 կգ քաշային կարգ): Այս մրցաշարը դիտվում է որպես Ռուսաստանի բռնցքամարտիկների կարեւոր մրցումներից մեկը, որն օգնում է մարզիչներին հեռանկարային մարզիկների ընտրության աշխատանքում: Այս անգամ մրցաշարին մասնակցեց մոտ 200 բռնցքամարտիկ:

ԱՐՄԵՆՊՐԵՍ

Սելեշը ԱՄՆ-ի հավաքականում

Մոնիկա Սելեշը հանդես կգա ԱՄՆ-ի հավաքականի կազմում եւ կմասնակցի թենիսի միջազգային ֆեդերացիայի գավաթի խաղարկության եզրափակիչին, որը նոյեմբերի 25-26-ը կայանալու է Իսպանիայում: Մրցակիցը լինելու է Իսպանիայի հավաքականը: Սելեշը հանդես կգա թե մենախաղերում եւ թե զուգախաղերում:

Շաքիլ Օ՚Նիլի մատը ջարդվեց

ԱՄՆ-ի պրոֆեսիոնալ բասկետբոլի ամենահայտնի աստղերից մեկի՝ Շաքիլ Օ՚Նիլի մատն է ջարդվել: 23-ամյա տաղանդավոր բասկետբոլիստը, ըստ բժիշկների, առնվազն վեց շաբաթ ի վիճակի չի լինի մրցասպարեզ դուրս գալ: Շաքիլ Օ՚Նիլը ամերիկյան բասկետբոլի ամենաարդյունավետ խաղացողներից մեկն է եւ NBA-ի նախորդ առաջնության ամեն մի խաղում միջինը վաստակել է 30 միավոր: Շաքիլ Օ՚Նիլը Կանադայում տեղի ունեցած աշխարհի անցյալ տարվա առաջնությունում ճանաչվել էր աշխարհի լավագույն բասկետբոլիստ: Նրա բացակայությունը մեծ կորուստ է իր թիմի համար:

ԱՍՏՂԵՐ

Նենսի Քերիգանը երջանկացավ

Նենսի Քերիգանը եւ Ժերի Սոլոմոնը

Ամերիկացի հանրահայտ գեղասահորդուհիներ Տոնյա Հարդինգի եւ Նենսի Քերիգանի միջեւ սկանդալային պատմությունից հետո բավականին ժամանակ է անցել: Հիշեցնենք, որ ԱՄՆ-ի հավաքականում իր կայուն տեղն ունենալու համար Տոնյա Հարդինգը Լիլեհամերի ձմեռային օլիմպիական խաղերից առաջ դաժան հաշվեհարդար տեսավ իր գլխավոր մրցակցի՝ Նենսի Քերիգանի հետ, հարձակում կազմակերպելով նրա վրա:

Տոնյա Հարդինգը արդեն իր արժանի պատիժն է կրել, ցմահ զրկվելով ԱՄՆ-ի հավաքականում հանդես գալու իրավունքից: Թվում է, թե ամեն ինչ արդեն մոռացվել է: Սակայն թե Տոնյա Հարդինգը եւ թե Նենսի Քերիգանը շարունակում են մնալ շատերի ուշադրության կենտրոնում:

Մինչ Տոնյա Հարդինգը Ջեֆֆ Ժիլլուլինից հետո նոր ամուսին է փնտրում, բախտը ժպտաց Նենսի Քերիգանին: Նա շատ հեռուներում չփնտրեց իր արքայազնին. Ժերի Սոլոմոնը նախկինում նրա գործերի կառավարիչն ու ընկերն էր: Նրանք իրենց «այո»-ն ասացին Բոստոնի «Կոնվանենս» եկեղեցում: Ծափահարություններ, պարոնայք...

Գ. Ա.

ՎԱՃԱՌՎՈՒՄ ԵՆ

60-100 օրական հավի ճտեր

Հեռախոսներ
Երեւանում
(374-2) 234073
Էջմիածնում
(8-259) 5.86.98
(8-259) 4.19.76

A STYLE

աշխարհ

ԱՄՆ

Խիստ սահմանափակումներ հաստատվեն Ռուսաստանից, Ուկրաինայից եւ Հայաստանից ներգաղթողների դեմ

Միացյալ Նահանգների Ներկայացուցչական պալատի իրավական հարցերի կոմիտեն մի քանի ամիս տեւած քննարկումներից հետո, որոնց մասին «Ազգը» արդեն գրել էր սեպտեմբերի 29-ին, հավանությամբ ընդունել է մի օրինագիծ, որը խիստ սահմանափակումներ է մտցնում ներգաղթի կանոնների մեջ եւ, մասնավորապես, սահմանափակում է Ռուսաստանից, Ուկրաինայից եւ Հայաստանից օրինական ձեւով ներգաղթողների թիվը: Այդ քննարկումների ժամանակ օրինագծի հակառակորդները պնդել են, որ ԱՄՆ-ը վտարանդիների երկիր է, եւ որ տարագիրներն իրենց հետ բերում են այն աշխատանքային էթիկան, որը Միացյալ Նահանգներին դարձրել է մեծ եւ հարուստ երկիր: Օրինագծի կողմնակիցները ընդգծում են, որ իրենց առաջարկած օրինագիծը ուղղված չէ ներգաղթողների դեմ ընդհանրապես: Այն առաջին հերթին ուղղված է պայքարի անօրինական ներգաղթի դեմ: Այդ պատճառով էլ սպասվում է, որ երբ Ներկայացուցչական պալատում օրինագիծը դրվի քննարկման, կոնգրեսականները կձգտեն այնպիսի ուղղումներ մտցնել, որոնք թուլացնելով օրինական ներգաղթի վրա դրված սահմանափակումները, միեւնույն ժամանակ կոշտացնեն անօրինական ներգաղթի դեմ պայքարի միջոցառումները:

Այդ միջոցառումները մասնավորապես նախատեսում են ԱՄՆ-ի հարավային սահմանների պարեկային ծառայությունն իրագործող ոստիկանական կազմակերպությունների ուժեղացում եւ Միացյալ Նահանգներ մուտք գործող եւ աշխատանքի տեղավորվել ձգտող արտասահմանցիների ցուցակների համակարգչային հսկողության իրագործում: Նախատեսված միջոցառումներից կոնգրեսականների համար ամենավիճելին, թերեւս, անօրինական ներգաղթողներին ամերիկյան սոցիալական ապահովության բարիքներից զրկելն է:

Օրինագծի կողմնակիցներն ասում են, որ երբ նույնիսկ օրինագիծը հաստատվի Ներկայացուցչական պալատի եւ Սենատի կողմից եւ արժանանա ԱՄՆ-ի նախագահի հավանությանը, միեւնույն է, Միացյալ Նահանգները ներգաղթողների նկատմամբ աշխարհի ամենաառատաձեռն երկիրը կմնա:

ԳՐԻԳՈՐ ԷՄԻՆ-ՏԵՐՅԱՆ

AJAX TOURS & TRAVEL

ԱՅԱՔՍ ՖԻՐՄԱՆ ՀՐԱՎԻՐՈՒՄ Է

ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 29-ին ՀԱՃԵԼԻ ՏՈՒՐԻՍՏԱԿԱՆ ՈՒՂԵՎՈՐՈՒԹՅԱՆ

7 ՕՐ

ՀՆԴԿԱՍՏԱՆՈՒՄ
- ԿՏԵՍՆԵՔ ԿԱԽԱՐԴԱԿԱՆ ԴԵԼԻՆ
- ՀԱՐՄԱՐԱՎԵՏ ՀՅՈՒՐԱՆՈՑ
- ԷԿԶՈՏԻԿ ԷՔՍԿՈՒՐՍԻԱՆԵՐ
- ՇԱՀԱՎԵՏ ԱՌԵՎՏՈՒՐ
- ՆՈՐ ԳՈՐԾԸՆԿԵՐՆԵՐ

ԱՅԱՔՍ-ը Ձեզ պատրաստել է հաճելի անակնկալ
Ֆանտաստիկ ցածր գներ

Նոր ավիաչվերթ նոյեմբերի 5-ից ԱՄԵՆ ԿԻՐԱԿԻ
ԵՐԵՎԱՆ - ԱՆԱՊԱ
ուղեւորների անվճար տեղափոխում օդանավակայան
ԵՐԵՎԱՆ ՊՈՒՇԿԻՆԻ փ. 43ա հեռ. 530 - 551, 524 - 564

ՀԱՄԱՌՈՏ

Ռուսական ավիակիրը խաղատուն Մայամիում

Մայամիի խաղատնային ընկերություններից մեկը` Jockey Club Inc. ը հայտարարեց, որ իր մասնաճյուղերից մեկը մտադիր է գնել ռուսական նավատորմի «Ադմիրալ Գորշկով» ավիակիրը: 38 հազար տոննա ջրատարողությամբ, այդ ռազմանավը 270 մետր երկարություն եւ բազմաթիվ մարտկոցներ ունի: 1982 թ. կառուցված այդ ավիակրի վրա 1994 թ. տեղի ունեցած վթարից` շոգեմեքենայի պայթյունից զոհվել էր 7 նավաստի: Ամերիկացիներն ուզում են խափանված ավիակիրն օգտագործել որպես խաղատուն: Առավել «բնական» մթնոլորտ ստեղծելու նպատակով, ընկերությունը խաղամոլներին Ֆլորիդայի ափերից ավիակիր կհասցնի «Մի-8» տիպի ռուսական 15 մարտական ուղղաթիռներով:

L'EXPRESS

Մարկ Զախարով. Տեղում գնդակահարել

Ճանաչված ռեժիսոր եւ հրապարակախոս Մարկ Զախարովը հոկտեմբերի 27-ին «Իզվեստիայում»` Ռուսաստանում քրեածին իրադրության շուրջ իր անզիջում կարծիքն է արտահայտել: Թերթը հրապարակում է «Գնդակահարություն տեղում» նրա հոդվածը, որտեղ հեղինակն առաջարկում է մեծապես խստացնել քրեական հանցագործությունների համար պատիժները Ռուսաստանում, գոնե «անցումային շրջանում»` 3-5 տարի, ամենաթողության դեմն առնելու նպատակով:

ԱՐՄԵՆՊՐԵՍ

ՀԱՅԿԱԿԱՆ ԱՎԻԱՈՒՂԻՆԵՐ

Նոյեմբերի 1-ից եւս մեկ օդային կամուրջ կապեց մայրցամաքները:
Տարանցիկ նոր չվերթը ԵՐԵՎԱՆԻՑ
Ձեզ կտեղափոխի դեպի ՍՈՖԻԱ,
իսկ այնտեղից...
«Բոինգ 767»-ով... Նյու-Յորք:
ՍՈՖԻԱՆ Ձեր առջեւ ուղի կբացի
դեպի Եվրոպայի ցանկացած երկիր:

Տեղեկությունների համար դիմել «Զվարթնոց» օդանավակայան
կամ ՀԱՈՒ-ի գործակալներին

ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ

Ռուս գիտնականները հաղթեցին էբոլա վիրուսին

Էբոլա վիրուսը հայտնի դարձավ մոտ 20 տարի առաջ: Այն կապիկներից մարդուն է փոխանցվում արյուն ծծող մի ջասների կողմից: Աֆրիկայում վիրուսով վարակված մարդիկ մեռնում էին եւ այժմ էլ մեռնում են ահավոր տանջանքներով: Էբոլան հարուցում է ներքին օրգանների բորբոքում, ախտահարվում են արյունատար անոթների պատերը: Դրանցից դուրս եկող արյունը թափանցում է մարդու օրգանների եւ հյուսվածքների մեջ: Հիվանդը վերածվում է արնածոր մսակտորի: Էբոլայի առաջացրած մահացության տոկոսը հասնում է 80-ի: Հակաթույն գոյություն չուներ: Եվ ահա սենսացիա: Ռուսաստանի զինվորական բժիշկները կարողացան ստեղծել գամմա գլոբուլին, որը բուժում է էբոլայի հարուցած հիվանդությունը: Պատմում է ՌԴ ճառագայթային, քիմիական եւ կենսաբանական պաշտպանության զորքերի պետի վարչության առաջատար մասնագետ գնդապետ Իգոր Տիխոնովը. «Հակաթույնի որոնման դժվարությունն այն էր, որ յուրաքանչյուր վիրուս կարելի է վնասազերծել միայն որոշակի գամմա գլոբուլինով: Ինչպե՞ս այն գտնել: Դա գիտական բարդ խնդիր է: Աշխարհում ոչ ոք չէր կարողացել դա լուծել: Իսկ մենք կարողացանք: Էբոլայի հակաթույնը հայտնաբերեցին Ռուսաստանի պաշտպանության նախարարության մանրէաբանության ինստիտուտի մանրէաբանական կենտրոնի աշխատակիցները, բժշկական ծառայության գեներալ մայոր Ա. Մախլայի գլխավորությամբ:

Մեր զինվորական մանրէակենսաբանները էբոլա վիրուսի հետ աշխատում էին մոտ երկու տարի: Նրանք, սկզբում, առհասարակ հակված չէին զբաղվելու աֆրիկյան հիվանդություններով: Բայց ամերիկյան ռազմական հետախույզներից մեկի մոտակայքում բռնկվեց էբոլային շատ նման խանձաձեւ մանրէ հիվանդությունների համաճարակ: Բացի դրանից, վերջին տարիներին, զգալիորեն շատացել է ահաբեկչությունը... Որոշում ընդունվեց, որ «համենայնդեպս» պետք է փորձել գտնել հակաթույն: Աշխատանքը շատ վտանգավոր էր: Պաշտպանության միջոցների ամենափոքր բացվածքը, փորձերի ենթակա կապիկի կծելը կարող էին խիստ ողբերգական հետեւանքներ ունենալ: Դժվար էր նաեւ ընտրել այն կենդանուն, որի արյան սպիտակուցից հնարավոր կլիներ հակաթույն ստանալ: Զինվորականները, որոնք այսօր` ընդհանուր խառնաշփոթության եւ առողջ ծախսի պայմաններում անգամ շարունակում են զբաղվել բնակչության անվտանգության հարցերով, ի վերջո ընտրեցին ձին: Նրա արյունից բժշկական գիտության դոկտոր, պրոֆեսոր, գնդապետ Վ. Միխայլովը, գիտությունների թեկնածուներ փոխգնդապետներ Ե. Բորիսեւիչը, Վ. Կրասնյանսկին, Վ. Գրաբորովը եւ կենսաբանական գիտությունների թեկնածուներ Ն. Պոտրիվաեւան, Ե. Լեբեդինսկայան, Ն. Չեռնիկովան եւ Գ. Տիմենկովան մի քանի ամիս առաջ ստացան էբոլա մանրէի` աշխարհում առաջին արդյունավետ հակաթույնը: Զինվորական գիտնականները շատ շուտով կարողացան փորձով ստուգել հակաթույնը: Զաիրում այս տարվա ամռանը բռնկվեց էբոլայի հերթական համաճարակը: Վարակվեց 297 մարդ, որոնցից 233-ը մահացավ: Զինվորական մանրէաբանները գամմա գլոբուլինի 100 չափաբաժին հանձնեցին առողջապահության համաշխարհային կազմակերպությանը: Ռուսական հակաթույնի կիրառությունը գերազանց արդյունքներ տվեց: Սակայն Ռուսաստանում չեն կարողանում հոգալ միայն մարդկանց մասին: Իրենց առողջությունը, իսկ երբեմն էլ կյանքը վտանգի են ենթարկած ռուս զինվորական մանրէաբաններին որեւէ ձեւով վարձահատույց չեղան: Ռուսաստանում կան լավ, խելացի, համբերատար մարդիկ, եւ տերության այս վերաբերմունքը վիրավորական է:

«ԿՈՄՍՈՄՈԼՍԿԱՅԱ ՊՐԱՎԴԱ»,
24 հոկտեմբեր

Անվճար տեղեկություններ Հայաստանում գործող ձեռնարկությունների *առաջարկի* եւ *պահանջարկի* մասին հեռախոսով: Զանգահարել 589167, 581351 «Սփյուռք»:

«Պարբերական» հրատարակչության տպարան. Երեւան 23, Արշակունյաց 2 Գրանցման թիվ 65. Դաշին 69149. Պատվեր 1964 Տպաքանակ` 7000 Ստորագրված է տպագրության` 27. 10. 1995 Գինը` 50 դրամ